

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սալն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported CC BY-NC 3.0 license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կայքով
մեղմելով կամ ոչմեղմելով սովորական ստեղծելու իրաւոր ծրր

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format
Adapt – remix, transform, and build upon the material



ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ



ԹԱՊԼԱՔԵԱՐ

ՓԻԼԻԿ ԱԽՊԱՐ



ՍԻՄԱՆՈՍ ԱՂԲԱՐ

Կ Ա Մ

ԹԱՊԼԱՔԵԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ



Կ. ՊՈԼԻՍ

1925



891.99

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ



ԹԱՊԼԱՔԵԱՐ

ՓԻԼԻԿ ԱԽՊԱՐ



A 29608

Handwritten signature in blue ink, possibly reading 'H. G. Berberian'.



(Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

37




Կ. ՊՈԼԻՍՏՐՊԵՐԵԱՆ ԳՐԱՏ 1925

HARRY G. BERBERIAN
837 WASHINGTON ST.
BOSTON MASS.



ԹԱՊԼԱՔԵԱՐ

ՓԻԼԻԿ ԱԽՊՈՐ ԱՂՋԻԿՏԵՍԸ



ՅՍ քառասունը հինգ տարեկան անձը, որ բաղմամարդ գիւղի մը մէջ հացագործի թափլաքեարութեամբ կ'զբաղէր, որուն կլինը քանի մը տարի առաջ մեռած էր, հաց տուած յաճախորդներէն մէկուն երեսունը հինգ տարեկան աղջկանը սիրահարուած կ'ուզէ զայն կնութեան առնուլ: Սակայն գաւառացւոյ սոսվորութեանցը համաձայն, որք իրենցմէ տարիքոտ եղողներուն խորհուրդ կը հարցնեն, աս մարդն ալ խնդիրը իր քաղաքացիներէն Ահարոն աղա անուն անձի մը պարզելով կ'աղաչէ որ այս բարեկամն ալ անգամ մը աղջիկը տեսնէ:

Ահարոն աղան յետ մտածմանց՝ — Մընչո՛ւկ, ատ իֆատէթ էքէյիճէ տաղտաղալը մատտէ մի է ըմմա՛նէ իսէ հայտէ առջիս ինկիր նայիմ —, ըսելով կ'ելնեն աղջիկան տունը կ'երթան: Օրիորդին մայրն ու մօրաքոյրը յարգանօք կը դիմաւորեն այս հիւրերը և սենեակ մը կ'առաջնորդեն, ուր փեսացուն աթոռի մը վրայ բարեւ բռնած կը նստի, Ահարոն աղան ալ բազմոցին մէկ անկիւնը ծալապատիկ կը նստի:

Իրարու կենցաղավարութիւններ հարցնելէ ետքը Ահարոն աղան սիկառը կը վառէ և խօսակցութեան թելը ձեռք կ'առնու:

— Տիւտիւ հանըմ, իշտար ուր մեր Փիլիկ ախպարը ձեր պայվական հանըմ ախշինը իրեն հարսա առնելու խարար

տուեր է իսէ նը՝ հէմշէրիութան հրմար ծառանականս ալ
անգամ մի ֆէօս բիրաւ ուր՝ մատտէին տիպաճասնտան մու-
խուֆ ըլլիմ, գէօրէ՝ Աստուածպետականութիւնը խըսմէթ
ուր անէ՝ մեղաւորս ալ կնքահար տըլլիմ :

— Ողջ ըլլաք, շնորհակալ ենք քի թէնէզուր ըրիք տէ
հրամմեցիք, հէլպէթտէ ասանկ բաները պարեկամներու
հարցնելով կ'ըլլայ :

— Պէլի, ըմպէս է, վէ հէր իշտար ուր խօրաթըմա չի
տի առնինք իսէ նը՝ վութը պէնտի միւթէճավիւզ մուխա-
վէլէ մի տ'անինք :

— Աֆ կ'ընես ճէսարէթիս ամա՝ հաճի աղա, քիչ մը
կրարառ խօրաթելուդ՝ ատ միւթէճավիւզ մուխավան ինչ
ըսել ըլլալը չի հասկցայ :

(Փեսացուն կը թարգմանէ)

— Շատ աղէկ, ատ խավլէրնիդ հէլպէթտէ մեղի պիտի
իմացնէք :

— Հըպա՞, ախշին հանըմը որ գայ իսէ՝ տի ըսիմ : Մա-
լիւմ ա՛, հըմայեկս ըչպօրթայով մալ ծախողներն հազար-
ներով խօրաթըմա կ'առնին վէ հէտիյէ մի պիլէ չին անիր
հարսաններնուն, անճախ, մեր Փիլիկ ախպօր պինդ առաջէն
ախշին հանըմին բուռլանթիէ մայնի մի տալով ատ խօրա-
թըմաէն վազ գալուն սէպէպը սա է ուր՝ ինք օլտուխճա
մենժ մէշղուլիյէթի մի մէջ է, էքէյի ալ սահիպի միւլք ու
էմլաք է, վախիտէ ասօրվան օրս էքմէքճիի թապլաքեար
մի է իսէ տը՝ կէնդանի աղօթքը բարեխօս օղորմած ֆոգի
հօրը Ղատիրկա մէյտանիի կրակէն ազատած էրած տէֆթէ-
րին մէջ թախըմ մի թիւճարճա վէ էսնաֆճա պուլաշըխ
մուհասէպէններ վէ մաթլուպաթներ ունի, էնոնց բույէթին
ու թէսվիյէին ուղրաշմիշ տըլլի :

— Ասլը մենք ալ իր իւշկիւղարութեանը համար աս
կործին խարար տուինք, իրեք տարի է հետը ախգուաթա
կ'ընենք՝ էյ մեղա՛յ, օր մը աշկը վեր չառաւ տէ սանկ երես-
նիս ծուռ մը չի նայեցաւ :

— Ատի էսնաֆութան պիրինճի դայտէն է :

— Հաթտա , գովել չըլլայ՝ ձեր կիտած ուններէն ինքեց մինքեց քսանըհինգ օրուան որբեւայրի մնացող փեսան ալ կնկանը մեռնելէն տասներհինգ օր ետքը ըրեր ուզեր էր տէ՛ մենք չըլլար ըսինք :

— Ի՞նչ կ'ըսիս հանրմ , անոր կնիկը մեռա՞ւ եա՛ :

— Հապա՞ , հէմ զավալը կէնճին քառասունքը պիլէ չէլած՝ էրիկը կարգուեցաւ :

Այս միջոցին օրիորդը անոյշ կը բերէ . Ահարոն աղան անոյշն առնելէ ետքը ջուրը խմած միջոցին չորս աչքով հարսնացուն կը դիտէ և կը հրամայէ որ ափսէն տեղը տանելով շուտ մը վերադառնայ , որպէս զի մուխավէլէն մտիկ ընէ : Օրիորդը կը հնազանդի եւ Ահարոն աղային մատնանիշ ցցուցած աթոռին ծայրը նստելով՝ ունկնդիր կ'ըլլայ :

— Պինդ առաջ եաղ ֆուչուսիին չէմպէրները ֆուստանիդ ներքեւէն չի տի կախես :

— Բը՛սթ , աֆ կ'ընես աղա , ատ եաղ ֆըչըսիին չէմպէրները ո՞րն է :

Փեսան — Ջաննս մալագօֆը ըսել կ'ուզէ :

— Էյ ան հիմա պարիթ է , հէմ մենք անանկ ամէն զանցայի ականջ կախողներէն չենք :

— Սանիյէն՝ ալիւրը չի տի փաթտուիս :

— Հա՛հ , հա՛հ , հա՛հ , վա՛յ բէք խօշ կը խօրաթես կոր հաճի աղա :

— Խօշ կու խօրաթիմ ըմմա՛ բաճօնճա է :

— Այո՛ , անանկ է :

— Սալիսէն՝ պօշդ ի վար պօխճան չի տի կախիս ուր՝ տեսնողը հինգ թավուղի չի գիննայ :

— Քուրուկ , ատ պօխճա ըսածը ո՞րն է :

— Թիւռնիկը ըլլալու է , անանկ չէ՞ մի հաճի աղա :

— Էֆէնտըմ , կ'ուզէ տիւտիւկ ըլլի՛ կ'ուլէ զուռնա , ան պօխճան չի տի կախէ :

— Բէք աղէկ , թող չի կախէ :

— Բապիէն՝ հիմակու զանցային թախըմ մի ախչիննե-

բուն պէս բամմանքդ ալ քընթիղ է մէջէն չի տի խօրաթես
ուր՝ Փիլիկ ախպօր կնիկը խըմ խլմ է չըսին :

— Հաճի աղա , կովել չըլլայ ամա՛ մեր զաւակը անանկ
թապիյէթներ չունի :

— Սամիսէն , էրիտասարդ մը տեսնաս իսէ բիրէի պէս
ասդին անդին չի տի ցատկոտես :

— Վույ աֆ կ'ընես հաճի աղա , ատիկայ տիւշմանի
խօսք է , պարէ օր մը օրանց ատանկ բան մը ըրա՞ծ ըլլայ ,
հէմ կ'ուզեմ քի աս խօսքը խառնող տիւշմանս հասկնամ :

— Քուրուկ , դուն եաղնըչ հասկցար , խօսք խառնող չի
կայ , դող մ'ելլար , անանկ թապիյէթ ունի եղեր չըսեր կոր՝
չունենայ կ'ըսէ :

— Ատ պաշխա . . . :

— Տիւտիւ հանրմ , բամմանքդ ճէլալլանմիչ կ'ըլնիս
ըմմա՛ աս մեր մուխավէլէն է :

— Հաճի աղա , ան ձեր ըսածին բան չըսեր կոր , սխալ
հասկցաւ տէ . . . :

— Բիք աղէկ , պէյիս չիկայ : Սատիսէն՝ թախըմ մի ախ-
չիններու պէս կէս արշունի պօյով պախճէպան քիւֆէսին
զլխուտ չի տի անցունես :

— Քուրուկ , ատ պախճապան քիւֆէսին ի՞նչ է :

— Շարխային համար ըլլալու է :

— Է՛ ասլը մենք ալ ցած սօյէն խաբութ կապել պիտի
տանք :

— Չիյտիմ , կ'ուզէ խաբութ ըլլի կ'ուզէ մարս ըլլի ,
հավալէլի չի տըլլի , վէսէլամ :

— Շատ աղէկ :

— Եէտինճի , սարֆի թահսիլտարի պէս ճամբան չան-
թայով չիտի քալես :

— Ատ ալ աղէկ :

— Էնճամիւլ քէլամ , հէր իշտար ուր բամմանքիիղ օլ-
տուխճա ֆիրէնկճէէն մուխուֆ էք իսէ նը՝ ատ իլիմը ձեր
քովը քեանիլիմ եէօքիւն հիւքմով տի մնայ , զէրրէ , մեր
Փիլիպ ախպարը ատ իլիմին մուխուֆ չըլլալուն՝ չիւպհէի

զահապ կ'ըլլի, վէ ճամբան քալած վախթըղ Փիլիկ ախպօր-
մէն առաջ չիտի քալես ուր ամէն մարդ անիկայ քու ուշախոյ
չի գիննան: Իշթէ էֆէնտըմ, աս վութը պէնտի միւթէ-
ճավիւղ մուխավէլէնիս խապուլ ընէք իսէ՛ աս մատտէին
ալ խարարը կուտանք:

— Բէք աղէկ, խապուլնիս է հէմ կովել չըլլայ՝ զաւակս
միւթիւ է:

— Անանկ է նը Զատկէն ետքը ճէմիյէթնին (հարսնիք)
կ'ընինք, անճախ, թախըմ մի միւպալաղալը մասարիֆներ
չըլլալու հըմար էրիյ մարդ տավէթ մ'անէք ուր բաթըրտը
չըլնի, պախուսուս հարսնիք ըսածդ ալ օլտուխճա կնիյ
մարդ շատ ըլլալու է ուր՝ համով ու բարով ըլնի:

— Շատ աղէկ, ուզածնուդ պէս կ'ընենր:

« Բոժոժիկ. — Մենք ալ այժմէն կը խոստանանք հա-
կառակ Ահարոն աղային կամաց ամէն ջանք ի գործ դնելով
ներկայ գտնուիլ այդ հարսնիքին: »

Թ Ա Պ Լ Ա Ք Ե Ա Ր

Փ Ի Լ Ի Ն Ա Ղ Բ ՈՐ Զ Ա Տ Կ Ա Կ Ա Ն Ն ՈՒ Է Ր Ը

Մեր թապլաքեար Փիլիկ ախպարը Զատկի առթիւ իր
նշանածին չէօրէկ եւ փիտէ տանելու դիտաւորութիւն ունե-
նալը Աւագ Զորեքչաբթի առաւօտ կ'երթայ խորհրդական և
կնքահայր Ահարոն աղային կ'իմացնէ: Ահարոն աղան յետ
մտածմանց կը պատասխանէ.

— Հըմայէկս ատ պօմպակը էօնկըճէդ հանէ՛ Փիլիկ,
վախիտէ Ստանպօլու տէլիխանլըները իրենց հարսացիւներ-
նուն տիւնը մէքիւկիւ պէս երթալ գնալ մի իթթիխազ արեր
են իսէ տը՛տա խուսուսը քեզի հըմար չէ՛. բամմանքդ օլտուխ-
ճա քեամիլ մէյն ես: Զէօրէյն ու փիտէն տանելու մատտէին
գալով, ատիկա վաճիպ է ըմմա՛ մընչուկի մի հետ կու խալ-

րինք, էնճամբուլ քէլամ, ճէմիյէթէն առաջ ֆէօն չիտի երթաս վէսէլամ, իշտահդ սուրբ Եղիային պահէ ա՛ղա :

— Մառայ իմ Ահարոն պէկ, պէք խայտէլի կու խօրաթէք ըմմա՛ առ չէօրէյն ու փիտէն ո՞վ տի տանի :

— Էֆէնտըմ պօշ մարդուն զըտլը՞խը մի կայ, Տիւտիկենց դարտակ փոք Աստիւրին հետ կու խավրինք իշթէ, մէյթուպ մի ալ կու գրինք՝ հէմ քիպարճա կուլնի հէմ բարով, քանի՞ փիտէ թախսիս արիր :

— Վեց փիտէ ու մէկ պաթալ թէփսի չէօրէկի :

— Տասներկու փիտէով երկու չէօրէկ խաւրելու ես ուր հարսացուիդ մայմուռ պախըշլը հանըմ տիւտիւ թէյզէ ալ հիսսէտար ըլնի, առ վեց փիտէ ու մէկ չէօրէկին մէսարիֆը ես թէտիեէ տ՛անիմ :

— Բֆք ազէկ, դխլուս վրայ ըմմա՛ առ մէյթուպին թահրիրին մատտէն քընչիյ մի միւշկիւլճէ է, շարթլու շուրութլու նիզամի տայրէսին բան մի ըլլալու է ուր՝ պուզտիկ չի մնամ :

— Էֆընտըմ, իսթիտա չիտի դրինք ա՛, հէմ բամմանքդ միամիտ եղիր, հըմայէկս աս զալէմն ու տիվիթը ա՛ն, ես ըսիմ դուն գրէ, պախուսուս առ մէքթիւպը ծառայականիս իմզայովը վաճիպ է ուր երթայ, զէօրէ կնքահար տ՛ըլնիմ :

Փիլիկ ախպարը ասոր ալ հաճութիւն տալով՝ Ահարոն աղային ըսածները գրեց այսպէս .

« Վերապայվական սիւսիւ հանըմ »

Թղթաբերիս, Տիւսիւկենց պարոն Ասիւրին վասրթայով բարաֆնիդ եկած երկու չեօրէկն ու տասներկուէն միւթեճավիւզ փիսկներն խապուլ անիֆ վե Զասկին միւնասիպէքովը անոյ՛ անեֆ : Պա մուխավէյե Եղիայի Մարգարէին կիրակին Փիլիկ աղբօր նեմիյէթը ընելու խարարնիս քեգրար ֆեօս պէյան կ՛անինֆ : Ան տասներկու փիսկներուն վեցը եւ մէկ չեօրէկը սահիպի իմզայիս բարաֆեն մայմուռ պախըշլը քէյգէ հանըմին սի խավրեֆ ուր անոյ՛ անե : Հըմեն ամենայն սրբոց յայտից եվ անյայտից բարեխօսութիւնը ըմմենուս վրայ ըլնի, ըմմեն :

Պենսկի


ԿՈԶՄՈԶԵՆՅ ԱՀԱՐՈՆ

— Տեսա՞ր մի հրմայէկս Փիլի՛կ, ընտո՞ր է :

— Ծառայ իմ աղա, բէք զայտէլի եղաւ :

— Է հատէ գնայ ատոնք թէտարիք արէ ուր՝ շարաթ առտու Տիւտիւկենց Աստիւրին հետ ճամբու զնես : Հարսացուիդ ալ հարուր տիրէմ չոր թիւթով քընչիյ մ'ալ սարուլու պաստեղ խավրէ ուր՝ զատկին օրերը էյլէնմիշ ըլնի :

Փիլիկ ախպարը աս հրահանգները կէտ առ կէտ գործագրել խոստանալէ ետքը Ահարոն աղային ձեռքը սլազաւ և շնորհակալութեամբ մեկնեցաւ :



Թ Ա Պ Լ Ա Ք Ե Ա Ր

ՓԻԼԻԿ ԱՂՊՕՐ ՀԱՐՍԱՆԵԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻԻՆԸ

Առաջին պսակը մօտենալուն առթիւ հարսնիք ունեցողներուն նման մեր Փիլիկ ախպարն ալ իրար անցած՝ անցեալ օր Ահարոն աղային հետ շուկան Պիթ-Բազարի մօտ պատրաստ հագուստ վաճառողներէն մէկուն խանութը կը մտնէ :

— Ի՞նչ կը փնտոէք կոր նայինք, հաճի աղա :

— Էֆէնտըմ, մալլում ա՛, տարօսը տէվլէթ խանէթ ըլնի, մեր Փիլիկ էմմին տի կարգինք, պէնտէնիզ ալ կնքահար տըլնինք, պինատէն ալէյ՝ ֆէօս գալնուս միւճիպը քնչիյ մի էսվապի թախըմ շտկել է :

— Շատ աղէկ, մենք ալ ձեզի առաջին տեսակ ապրանք մը պիտի տանք, քանինո՞ց բան կ'ուզէք :

— Էֆէնտըմ, հրմայէկս շատ մէսարիֆ ընելու ատեն չէ, աժընկիկ բան մը տըլլի, ծառայականիս էֆքեարը ֆունա տեղս տիրէկներուն արան խօլթուխճիի մի միւրաճաւթ ընել էր ըմմա՝ նէ իսէ ֆէօս ինկանք, փարանիս թող եսպանը չերթայ :

— Ողջ ըլլաք, շնորհակալ ենք ամա՛ հիշ փեսացուի մը համար խուլլանմիշ եղած լաթ կ'առնուի՞ մի եա՛ :

— Էֆէնտըմ, թախըմը դարտակ-փոր հէմ խօրաթըմա առնող տէլիխանլըներուն պէս մենք ալ քիրայով չիտի առնինք ա՛ :

— Աղէկ ամա՛ ամօթ է. . .

— Ամօթն ի՞շ ճիվերս է, փարայիս կէօրէ մասրուֆ տ'անիմ, հէմ բամանքդ Ստանպօլու մէջ էվ պարխանա տիւն տեղ ըլլալը խօլայ բան՞ մի կու գիննաս, թախըմի միւ պալաղալը մէսարիֆաթներ կան ուր՝ մարդուս լեղիւն թութիալ թավասիի պէս կու շորցունին վէ տամաղին կու փակցընին :

— Է՛յ աֆ կ'ընես ճէսարէթիս հաճի աղա ամա՛ ատ շիտակ հիսապները գիտնալէդ ետքը ինչո՞ւ համար հոս կը կարգուիք կոր :

— Աղա ատ խուսուսը սարֆը նազար արէ, աշուխամաշուխութին կայ մատտէին մէջ, չէ նը բերնի՞ն էր մունացեր, ո՞վ թող տիտար :

— Ատ պաշխա, ըսել է որ քիչ հագնուած խաթ մը լաթ առնել է մտքերնիդ :

— Հիւրիւմիւնք է, ունի՞ս մի :

— Ունիմ, հրամմեցէք իշթէ ձեզի քիչ հագնուած բան-թալօն մը, հէմ ալանկլէ :

— Էֆէնտըմ, ֆիյաթճա ույղուն թող ըլնի տէ՛ առնողը կ'ուզէ կլլէ կ'ուզէ նետէ : Փիլի՛կ անգամ մը հագիր ուր տեսնինք :

— Տի հագնիմ ըմմա՛ աս չըլլար :

— Ինչո՞ւ չըլլար, թամ քեզի համար շինուածի պէս է . մէյ մը հագի՛ր :

— Աղէկ ըմմա՛ չըսուելու տեղին վրայ եամա մի կայ :

— Եաման ի՞շ ճիվերս է Փիլիկ, դուն ֆիյաթին նայէ-ըմմէնը նստած տե՞ղդ տի հայիս ուր՝ ատանկ ճիպ դատարկ էֆքեար մի պէյան կ'անիս :

— Նա քեզի բալթօ մը իլէն ելէկ մ'ալ :

— Աղէկ ըմմա վարպետ, աս բանթօլօնը էրէյիճէ նեղ-
ուածք է, մարդուն ճիւղերը չաթալ չէքիճ դարձաւ:

— Հիմակուան պիչիմները ասանկ է:

— Վայ ճիտը տակը մի այ ատ պիչիմին ուր՝ հալխուն
պօճախներուն ճօմպօզի հիյէթ մի կուտայ: Նէ հալ իսէ,
վարպետ, ի՞նչ տի տանք ասոնց ճէրէմէ:

— Իրեք կտորին համար 100 դրուչ պիտի տաք:

— Ի՞նչ կ'ըսիս հէրիֆ, ես 100 դրուչով հէմ հարիւրին
տասն ալ իսկօնթոյով իրեք խաթ լաթ կու շինիմ:

— Ամէրիգանէ պիլէ շինեմ ըսես նէ՛ կինէ չեղլար հաճի
աղա, քիրայո՞վ կ'ուզէք կոր... բալթօն ֆասօնէ է:

— Աղէկ ա՛, ի բերանոյ քուճմէ դատեցար, վար սօյէն
է նը 100 դրո՞ւչ տի ընէ:

— Վար սօյէն չըսի՛ ֆասօնէ ըսի, խուճաշին ճինսին
անունն է:

— Նէ իսէ հարուրին տասը իսկօնթոյով 45 դրուչ տի
տանք:

— Իսկօնթօ միսկօնթօ չիկայ, իրա՞տ կ'առնէք կոր:

— Խայըր էֆէնտըմ, ասիկայ խայտէ մի է:

— Մենք անանկ խայտէ խույտէ չենք հասկնար:

— Անանկ է նը՝ իսկօնթօսուզ 40 տանք:

— Ին՞չ կ'ըսես, հաճի աղա, աս պիչիմ ելէկ մը շինել
տամ ըսես նէ՛ 50էն վար չեղլար. արշալ է ասիկա:

— Շալէ թող չըլլայ տէ տիւզ բան մը ըլնի, հէմ բամ-
մանքիդ բան մի ըսե՞մ, պօչ տեղը խօնթօխօրօնթոյի վէ
մարթավալի մի՛ պաշլայեր, զէօրէ վախիթ չունինք վէ պաշ-
խա տեղէ բաներ ալ տ'առնինք, թօփտան 45 դրուչի կու-
տաս նը՝ փարադ համրինք. հիչ չի խօրաթիս, բանիդ
կուզա՞յ:

Խանութպանը մտածելով որ խանութպանական յորդո-
րալից ճառախօսութիւնք օգուտ չպիտի ընեն աւելի ստակ
բրցնելու՝ « Ես ալ ձեզի յաճախորդս ընելու համար տուի
զնաց » ըսաւ և ծրարը Փիլիկ ախպօր թեւին տակը դրաւ:

Ահարոն աղան ալ ստակները համրելէ՛ ետքը, « Քալէ

նայինք, Փիլիկ, զանն ըս պօլ պօլ 100 դրուշով թամ ճուվէնա մի տըլլասս » ըսելով նոյն խանութէն հեռացան :

Նսյն օրը Ահարոն աղան Տուվա-Մէյտանիի սրաբացի գտակավաճառներէն թէ իրեն և թէ Փիլիկ ախպօր համար մէյ մէկ գտակ և խաֆաֆներէն ալ Յնական դրուշի մէյմէկ լապճին գալօշ առնելէ ետքը ոսկերչաց շուկան գացին, երես-տեսի համար օղ մը առնելու :

— Է՛յ Փիլիկ, ըսաւ Ահարոն աղան, փողոցին մէջտեղը կանգ առնելով, հըմայէկս աս չարսույին մէջ չորս աշկով տավրանմիշ տըլլինք, զէօրէ աս մօրուքնին տունկած վէ մէքիւկի պէս բանող թելլաները տեսա՞ր մի, խօնթօխօրօն-թոճի էին, բաշան տոտիկովը կու կուլլեցնին մարդուն վէ սըղրաքնթին կու խնդան, վախիտէ մեզ խաբելը բերներ-նուն չէ մնացեր ըմմա՝ մենք կինէ թէրթիպնիս գիննանք :

— Ի քեզ տէր իւսացայ մի՛ ամաչեցից յաւիտեանը մտքէդ մէկ երկու հեղ թէքբար արէ ուր՝ սա նիզալու չարսույէն պիլա քէտէրսիզ դուրս ելլանք :

Հազիւ թէ այս խօսքերն ըսեր էր, ահա միջնորդներու ծանուցեալ զքօսասէր խումբը շրջապատեցին այս երկուքը և խանութի մը առաջ դրուած ցած աթոռակներուն վրայ նստեցուցին :

— Պոչը փրթաւ, Փիլիկ, մրմռաց Ահարոն աղան, կու հայի՞ս մի էֆընտըմ, կատու շան տուղաքը մուշտէրիին ֆէվգէլատէ թէվապու կ'անին :

— Սա պօխճանիդ տուէք ներսը ըռաֆը դնենք քի հանգիտ ըլլաք, ուստա պատուիրան, սէն տէ կիթ աղալարա իքի գահվէ սէօյլէ, շնորհքով բիշիրսին :

— Էյ էֆէնտիմ, հաճի աղա ի՞նչ կը փնտռէք կոր նայինք :

— Էֆընտըմ, տարօսը տէվլէթ խանէթ ըլնի, մեր Փիլիկ ախպարը տի կարգինք :

— Ա՛յ, թապլաքեար Փիլիկ ախպարը ա՞ս է :

— Պէլի :

— Վախնամ Ահարոն աղան ալ գուք էք :

— Հիւրիւմիւնքէ, մեղաւորս, Ահարոն վէլէտի կօզմօզ :
վուսկէ՞ ցճանչցաք :

— Հնչակին մէջ կարդացինք տէ . . . :

— Աղա, ադ մախլուքին անիւնը մի տար ուր էֆքեարս
խապառմիչ չըլնի, զէօրէ մեզի ախշրքին չավ ըրաւ, մու-
խավէլէնիս իլան ըրաւ :

— Է՛ք ուզում Ահարոն աղա, ադ մուխավէլէն իրա՞ւ
բան էր :

— Հըպա՛, վութը պէնտի շամիլ էր, անգամ մի կաթ-
նավէր Պօթօթիկը ձեռքս իյնայ իսէ ֆէօքին տը քակիմ ըմմա՛
նէ իսէ, հըմայէկս ադ խուսուսը սարֆը նազար անինք
բաներնիս հայինք, վախտը ուչ է :

— Շատ աղէկ, թող ատանկ ըլլայ :

— Պինաէն ալէյհ, կէօրիւմլիխի հըմար բէլուզէի ճին-
սէն քիւբէ մի կ'ուզինք, հէմ բարով տ'ըլլի հէմ աժան :

— Աղէկ սմա՛ բէրուզէ օղ չըլլար :

— Թօֆաֆ բան, բուռլանթի մայնի կ'ուլի տէ՛ բէրու-
զէյէ քիւբէ չըլլի՞ր :

— Չըլլար, կ'ուզես նէ այլը քիւբէ մը տանք :

— Խայըր էֆէնտըմ, ատ թարաֆները բան չունինք,
ասոր ուր այլը քիւբէ առնինք նը՝ վաղն ալ մաշալլահը
չէլէնկ մի թալիպ կ'անին :

— Անանկ է նէ թութ քիւբէ մը տամ :

— Ատ ալ բէք պաեաղիլէթմիչ ըրիր, աղա՛, պէտէհա-
վա ծախուած թիւթիւն պիչիմովը մալ չինք ուզեր :

— Կեցէք, ձեզի քանի մը չիֆթ սարգըթմալը, քանի
չիֆթ ալ իւզիւմլիւ քիւբէ բերել տամ որ հաւնիք :

— Էֆէնտըմ, կ'ուզէ իւզիւմլիւ ըլլի, կուզէ խօրուսլի,
թող հէմ աժան հէմ բարով ըլնի տէ :

— Անանկ է նէ՛ կեցէք ձեզի աղւոր վիտալը օղ մը տամ,
հէմ գինն ալ էօաֆճա է :

— Հայտէ նայինք, ատ վիտալըին քնչիյ մը խելքս
պառկեցաւ, զէօրէ՛ վիտան դրուելուն պէս էօնկըճէն հանե-
լու դատիր չըլլար տէ՛ ֆէօն կու մնայ :

Իրիկուան ժամը տասն էր :

— Մինչդեռ Ահարոն աղային առած վիտայը օղին փոխարէն երկու ոսկին կը վճարէր՝ վարպետորդի մունկտիկ մը Փիլիկ ախպօր ծրարը խանութէն թոցուցեր և պարունակութիւնը ի տես դնելով կը պօռար :

— Է՛յ ճանրմ ուստալար, ազշամ բազարը, շու մալլարա բէյ վուրմալը. ալթը եամալը պիր բանթալօն, պիր չիֆթ պօեալը ֆէս, ազ գուլլանըլմիշ գափափ իշի իքի չիֆթ լապճին գալօշ, գալը տէօքիւլմիշ ինճէ պիր բալթօ, հէփսինէ պօխճասըյլա պէրապէր էվէլի մէզաթ օն ալթը պուչուգ դուրուշ վար, հառէ՛չ :

— Կէթիր պագալըմ ուստա կէս, քա՞չ գըռաթլըզ շէյ տիր, քիմի՞ն մալը տըր :

— Էսկի մատէն տիր, Պիթ Բազար օղլունուն տա մալի տիր, հառէ՛չ, չարուք էտին, չարսը գարուսը գարանըեօր. բարասընը ալաճաղըզ, իշիթտիք իշիթմէտիք տէմէեէսինիզ, հառէ՛չ, հառէ՛չ, հառէ՛չ :

— Օն փարա տա պէնտէն :

— Օն ալթը օթուզ բարա օլտու կայդէթ էտին պագալըմ, եալընըզ գալօշլարտա իքի օգկատան դիեատէ տէմիր նալչա վար :

Այս մեջոցին ուրիշ մունկտիկ մ'ալ Ահարոն աղային մօտեցած « Հաճի պէյ, սըտեղ խաթ մը քելեքիւր լաթ կայ, կ'առնե՞ս » կը հարցնէր :

— Խայրը էֆէնտըմ, պէյիս չիկայ :

— Ամա բէք աժան է, հաճի աղա, մէյ մը նայէ՛, թէլլալը կը պտըտցունէ կոր, սալթ գալօշներուն նալչաները լէպլէպիճիին տաս նէ՛ տեղը իրեք օխա լէպլէպի կ'առնես :

— Վա՛յ կատու կաթնավերներ, մեր պօխճան մէզաթի են հաներ. տեսա՞ր մի հըմայէկս սըվոնց կերած ապիւրը, Փիլիկ :

— Զարար չունի հաճի աղա, շախա ըրին, հիմա կը բերեն, նա՛ իշտէ բերին. ամա մեզ ալ տավէթ չէ՞ք ըներ ազ հարսնիքին :

— Էֆէնտրմ, պա մուխաւիէլէ, էրիյ մարդ տալէթ չի տըլլի:

— Աղէկ կ'ըսես ամա՛ Բոժոժիկը պիտի գայ եղեր:

— Բերնի՞ն է մունացեր, հէլէ թող գայ՝ պօճախէն բռնելուս պէս խուեուն տի նետեմ:

— Չիյտեմ արթըխ, երկուշաբթի առտուն ան ձեզ քիւֆէի մէջ դրած սօխախ չի նետէ տէ՛ վազ անցանք:

Այն պահուն շուկային դռները գոցուելու վրայ ըլլալով ամենքն ալ մեկնեցան: Հետեւեալ օրը փեսայ և կնքահայր Սալը-Պաղարը պազարէն ելսէն իւր մանկալը և 25նոց երկու մոմ առնելէն ետքը, առաջին պսակի կիւրակէ օրը հետեւեալ կարգաւ ճամբայ ելան:

Առջեւէն փռան գործաւորներէն մէկը, թիւլազարդ մանկալը գլխուն վրայ բռնած, անոր ետեւէն սրունքները բաց խամուրքեար մը, մոմերը բռնած, անկէ քսան քայլի չափ հեռուէն կուգային տաներեցը, Ահարոն աղան և Փիլիկ ախպարը, որ բարեւ բռնած և գլուխը խոնարհեցուցած կը քալէր, իսկ Բոժոժիկ՝ Ահարոն աղային հագած երկայն ճիւղպէին տակ պահուրտած էր, և ըրաւ չըրաւ յաջողեցաւ ամենէն առաջ տուն մտնել և երթալ հիւրանոցին մէկ անկիւնը ի տես դրաուած թիւլազարդ մանկալին քովիկը նստաւ:

Մոմերը ու մանկալը բերող մարդոց ճամբուելէն ետքը փողոցին դուռը գոցուեցաւ:



Թ Ա Պ Լ Ա Ք Ե Ա Ր

Փ Ի Լ Ի Կ Ա Ղ Պ Օ Ր Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք Ը

Տանը մէջ գտնուող հարսնեւոր տիկնայք և օրիորդք արժանավայել յարգանօք դիմաւորեցին փեսին խումբը և առաջնորդեցին հիւրանոց :

— Ողջոյն ձեզ :

— Օրհնեա ի տէր , տէր պապա :

— Պատուական կենցաղավարութիւննիդ ի՞նչպէս է :

— Փառք տիրոջը , իշթէ պէլլի՛ է եա , տէր պապա , Աստուած ամենուն ալ ասանկ հարկեր հարսնիքներ , աղէկ օրեր խըսմէթ ընէ քի ուրախ ըլլան :

— Ամէն , Աստուած անփորձ պահեսցէ , ի չար պատահարաց և ի չար դիպաց ազատեսցէ : Չօճուխները ինչպէ՞ս են :

— Մախսուս ձեռքդ կը պագնեն , աղէկ են :

— Օրհնեալ լինին :

Ահարոն աղան — Տիւտիւ հանրմ , պայվական քէֆէրնիդ ինտո՞ր է :

— Շնորհակալ ենք , կնքահար աղա , պս ս՞ր հովը փչեց քի թէնեզուր ըրիք տէ մեզի հրամմեցիք :

— Էֆէնտըմ , մալիւմ ա՛ իշթէ , մեր Փիլիպոս պէկին խելլին փուչած բօրեազլամա հովին սէպէպովը էկինք :

— Օղջ ըլլաք ամա՛ խըեանէթ , բէք ումմիշ ըրինք քի Ջատկին օլսուն մէյ մը կը հրամմէք , աչնընիս դուռը մնաց :

— Ըմպէս է , խաբառօյի մայնիէ թէսլիմ բերած օրերնուս ի վեր ֆէօս եկած չինք , վէ հէմ իշտար ուր Ստանպօլու նշանածներն իրարու սըխը սըխը էրթալ գնալ մի իթթիխազ արեր են իսէ տը՝ ատ դայտէն մէր էֆքեարըին մուզայիր է . . . : Ան չէ ըմմա , մայմուռ պախըշլը տիւտիւ հանրմը վո՞ւր է :

— Բը՛նթ :

— (Կամաց մը) Քա աղջիկ , դուրս կորսուէ , ի՞նչ կը խնդաս կոր :

— (Նոյնպէս) Քա մայրիկ, աս ի՞նչ խօշ մարդ է, մայ-
մուն պախըլը հանըմը ո՞վ է:

— Հարսին թէյզէին համար կ'ըսէ կոր, գացէք ներս
կանչեցէք:

— Նա իշթէ ան ալ եկաւ:

— Վա՛յ, հիւրիւմմէ հանըմ, հիւրիւմմէ, սանկըս ֆէօս
հիւրիւնմմէ:

— Մեղայ Աստուծոյ, վայ ճանըմ կնքահար աղա, մի-
սափիրները դրած իքէն կը վայլէ զէհէր մեզի սէտիրին
վրայ նստիլ:

— Ի՛չ կայ ուր չի տի վայլէ, էֆէնտըմ:

— Շնորհակալ եմ, հոս աւելի հանգիստ կ'ընեմ:

— Բարի: Պայվական քէֆէրնիդ աղէ՞կ է:

— Փառք Աստուծոյ, ձեզ տեսանք աւելի աղէկ եղանք:

— (Մեկուսի) Վայ լեզիւդ ուտիմ ուր պօչէն պալ կու
վազի: (բարձր) Ան չէ ըմմա, Զատկիս Պէյրոս էմմիին վա-
սըթայով թախըմ մի էմանէթներ զրկեցանք նը խապուլ
ըրի՞ք:

— Հապա՛, մեծապէս շնորհակալ ենք, մեզ ամօթով
ձգեցիք:

— էֆէնտըմ, մարդ իր սիրածին հէր ինչ ուր հիյպէ
անէ աշվին չերեւար, անանկ չէ մի՞ եա, տէր պապա:


— Այնպէս է, «Սիրեցէք զմիմեանս» կ'ըսէ սուրբ գիրքը,
Աստուած անփորձ պահեսցէ, յերեւելի և աներեւոյթ փոր-
ձանաց ազատ պահեսցէ:

Այս միջոցին երկու օրիորդներ հարսը կը բերեն, որ
ձեռք կը պագնէ և անկիւն մը կը կանգնի: Քանի մը վայր-
կեան անցնելէ ետքը անոյշ և սուրճ կը հրամցուի:

— էյ տահա ի՞նչ կայ չի կայ, նայինք, կնքահար աղա,
առուտուրները ի՞նչպէս են:

— Ընտո՞ր տըլի էֆէնտըմ, հըմակու ասիրըս ասհապը
մաթլուպ ըլլալը բէք չէթին բան մի եղաւ, կաթնավեր
մարդիկը մեզի մարդավալ կու կարդան վէ տեյին թէսվիյէ
չին աներ, թախըմ մի թիւճարճա էսնաֆճա պուլաշըխ
մատտէներ կան, էնոնց բույէթին ու թէսվիյէին ուղրաշմիշ

Ա 29608



տըլլինք, էկէր վախթին ան մէպլաղները առնէինք նը՝ տահա պաշխա բաներ ալ հէտիյէ տի բերէանք մեր հարսային :
— Ո՛ւ, շնորհակալ ենք, ի՞նչ զահմէթ :

— Քէշկէ ամենուն փեսաներն ալ ասանկ ամեն բաներնին շէնքով շնորհքով ընէին, դուն ալ ողջ ըլլաս կնքահար աղա քի՛ հօր մը պէս իր ամէն բանին կայնեցար, Աստուած տիւշմանիս ալ ասանկ փեսայ տայ, լայըխ չէինք ամմա՛ լայըխ տեսաւ :

— Տէրն վարձահատոյց արասցէ, զոործս ձեռաց իւրոց յաջողեցուսցէ, թէպէտ և քէսէպիչէին օրը մեր կնքահայր աղան շատ պնդեց կանոնական ծախսերը քիչցունել և . . .

— Էֆէնտըմ, անանկ ալ չընէինք նը՝ քէսէնիս ֆէօն տի ձգէանք, քէսէ պիչէ ըսին ամմա՛ քիչ մնաց չուվալ պիչմէ տ'ըլլար :

— Հոգ չէ, 40 տարին անգամ մ'է, և բոլոր ամուսնացողք այդ պահանջուած գումարը կը վճարեն :

— Ատի շիտտակ է, անճախ, ուսուլ ու զայտէ կ'ըսեն բան մի կայ, ատ նիզամնամէէն դիւրս թախըմ մի միւպալաղալը բաներ կան ուր մարդուն ֆէօքին կու սըխմին, մէսէլա, նէրտիվէն պաշի, սուֆա օրթասի, օտա քէօշէսի, վէ զայրի հիւմ վէ զայրիհիւմ ըսելով թախըմ մի մէսարիֆաթներ կու հանին . . .

— Հարկաւ անոնք ալ օր մը կարգի կը մտնեն սիրելիս :

Նոյն միջոցին գիշերուան ժամը մէկն էր : Տաներէցը հրամայեց նշանն ու հալալը բերել որ օրհնէ : Այս արարողութիւնը կատարուելէ ետքը օղիին ափսէն բերուեցաւ : Ի սկզբան Ահարոն աղան «չիմ խմիր» մը ըսաւ ալ նէ՛ չկրցաւ իրեն ներկայացուած գաւաթները մերժել, որով կամաց կամաց գլուխը սկսաւ տաքնալ, գտակը ծոեցաւ և իբր ի պատասխան դպրոցական տղու մը երգերուն, հետեւեալ շարականը կարդաց .

« Զան լըվեալ պէյեօսի, այնըրկէր առ Օվընէս, հարցանել թէ վէօ՞վ իցէ տավըճանող վարդապետին » :

Տիկնայք և օրիորդք խնդալէն կը մարէին, և իրենցմէ

ումանք չկրնալով անձայն խնդալ՝ սենեակէն դուրս կը վազէին . իսկ Ահարոն աղան ձեռքն ունեցած լեցուն գաւաթին վրայ նայելով , շարունակեց .

«Այսօր կօյնեցաւ փատ կենաց փրկութեան , վէժ պայվական ի խորանի քիւմ այսօր կօյնեցաւ . էկայք ժողովուրդք էրկրպագեսցուք .» Ինտո՞ր է տէր պապա , ահէնկն ու մախամը նիզամի տայրէսին է եա՛ :

— Չայնդ անսպառ , Աստուած անփորձ պահեսցէ , շատ աղուոր կարդացիք , սքանչելի՛ :

— Ույ օղջ ըլլաս , կնքահար աղա քի եկար մեզ ուրախացուցիր , ատ ինչ աղուոր ծան մը ունիս եզեր :

— Էֆէնտըմ , մեր վախթը վարժատիւն ուր կերթայինք նը՝ մեղաւորիս մախամը տավուտի ըլլալուն վարժըպիտ աղան իս առջին կու կօյնեցնէր վէ ասանկ ծանր շարականները ծառայականիս ըսել կուտար , վախիտէ հըմայէկա ալ տավուլի պէս հիյէթ մի քէսպ է արեր իսէ տը՝ ահէնկը նիզամի տայրէսին է :

— Քա աղջիկներ , տարիէ կ'ուզէ կոր , աս ատեն ո՞ւր կրնանք գտնալ :

— Քուրուկ , հիչ միտքս չիգար կոր , աս թարաֆները թէֆ ունեցող մը :

— Բէք օր չըլլայ նէ՝ քէնարլը թէփսին կը բերենք ծառքը կուտանք :

— Ո՛ւյ աֆ կ'ընես , ճանըմ կնքահար աղա , մենք ատ տարիէն հիչ խելք չըրինք :

Բոժոժիկ . — (Մեկուսի) Աշտարակն ենք :

— Պէլի , շիտտակ է , կնիյ մարդոց խելքը ասանկ մատտէներու չի հասնիր , մէշուլուլիյէթն ու ֆըսֆըսուկէն մախամնուս խերն անիծվաւ :

— Բայց դարձեալ մտիկ կ'ըլլուի , Աստուած անփորձ պահեսցէ :

— Կեդանութիւն :

— Անոյշ անմահութիւն :

— Ըմմենս ալ թօխա մը անինք ուր՝ ձեզի մեր քաղքին երգերէն հատ մի տի կ'անչիմ :

— Շատ աղէկ, հրամմեցէք, կերակուրին ալ ժամանակը եկաւ :

Բոժ. — (Մեկուսի) Ահարոն աղան ալ քաղաքը տուաւ :

Ահարոն աղան իրարու վրայ քանի մը անգամներ ուժով ուժով հազալով կոկորդը մաքրելէ ետքը սկսաւ հետեւեալը երգել :

Բաղնից դուռը զարկին սագրոյ,
Տարլըսանից ֆաշնի նագրոյ,
Նիրուըսանից հիւսիս նագրոյ,
Թող հիւսիսից ֆուսան նուասրոյ :

Ն Ա Գ Ա Ր Ա Թ

Նագ ըրե, նագրոյ վերցընիս,
Աշա քոզ շաֆար կերցընիս :

Քաշե հարսնուկ, ֆաշե հարսնուկ,
Մուասրոյ քուռանիս նայնի ե,
Էսալը ֆաշե, կերսանի կոյրե,
Փեսից քերածը վիսալի օղ ե :

— Վը՛շ, քա աղջիկնե՛ր, օղ բերեր են, ուռուճիզտէն կը հասկուցնէ կոր քի՛ անոր կէօրէ խըլընմիշ ըլլանք :

— Հա, սուս եղիք քի մտիկ ընենք, ծօ՛ Ակորճան, երջէ նէ խաղ սորվիմ տէյի խենդ կ'ելլաս, կրէ՛ իշթէ :

Ահարոն աղան շարունակեց .

Ն Ա Գ Ա Ր Ա Թ

Նագ ըրե, նագրոյ վերցընիս,
Աշա քոզ շաֆար կերցընիս :

— Քուրուկ, ատ արատա հեղ մը նագըր է նագըր է ըսածը ո՞րի համար է աճապա :

— Նագըր չէ, նագ ըրէ, եանի եա կոտորուէ, ըսել կ'ուղէ :

— Կոտորտի պիլէկիմ, հալովը չէ, գիտե՞ս, պէօս պէօ-
յիւք մարդ պիտի ըլլայ, նայէ ի՞նչ բաներ կ'ըսէ կոր:

— Անիկայ խաղ է զարար չունի:

— Է՛յ սո՛ւս եղիք քա, քի մտիկ ընենք:

— Դուն ի՞նչ կ'ըլլաս կոր ծօ, մտիկ ըրէ իշթէ, անկա-
ճիդ պամպա՞կ են թխմեր, մեղա՛յ, դգալնոց դուն ալ:

— Չաթալնոց դուն ալ, սա կտոր մը սուս ըլլաք կա՞յ
եա, գիտէք քի կը ճաթիք:

— Սո՛ւս, սո՛ւս, հարդ հետ չէ տէյի կէնէ քիթէ բերնէ
մի բերեր:

Ահարոն աղան.

Առսուս կ'եղայ պաղ պաղ հովերը՝

Պիւղպիւղ ջասըր զարկեր վարդիկն բոշորը,

Չորս պիկն ունի շուս երեսիկն բոշորը,

Փիղիպպոսիկն հարս սրղայ ախշիկիկն աղուորը:

— Քա մայրի՛կ, հարսը կը գովէ կոր:

— Հա, փեսան ալ հինտիի պէս խուռուլմիշ կ'ըլլայ կոր:

— Աս ի՞նչ խօշ մարդ է եղեր, աղէկ որ եկանք, ամեն
հարսնիքի մէջ մէյմէկ շառխատա մարդիկ կը գտնուին
կ'ըսեն ամա՛ աս արթըխ գափուլարը դարատը:

— Հոգի, ատ ինչէնի՞ ալ էնքսէն կը քերէ կոր:

— Զաւալը մարդը քէօշէն թախթա-պիթիին եուվաին
առջին նստուցուցեր են տէ՛ էկածէն պէրի կը խաշուի կոր:

— Տիւտիւ հանըմ, իշթէ մեր քաղքին ճէմիյէթներուն
մէջ աս երգերը կ'ըսին:

— Ույ կնքահար աղա, հէմէն շատ խնդաս քի՛ մեզ
ասանկ կ'ուրախացնես կոր:

— Էֆէնտըմ, ծառայականս ֆէօս տեղի հարսնիքները
մէկ երկու հեղ գնացանք իսէ՛ ասանկ բան մի չի տեսանք,
անճախ ճահիլ ճիւհիւլ թէլաշի մէջ կ'իյնան, աշկ կ'ընեն,
կինթ կու կաշին, պէկ-խօզի իշմար կուտան, ճահճիրի
ճիճճօ կ'անին վէ էնճամիւլ քէլամ, բիրէյի պէս շուբուռ

շուքուն կու ցատկուտին, նասըլ քի հիմայէկս ալ ան կաթնավեր բիրէ ու թահթա խուռուսիները պաշլայեցան վրանիս հիւճիւմ անել:

Եւ իրօք այս պահուս Ահարոն աղան աւելի կը նեղուէր ու կը քերուըտէր:

— Աստուած անփորձ պահեսցէ երեւելի և աներեւոյթ փորձանաց և ի թշնամեաց ազատ կացուսցէ:

— Պէլի ամառ վախթս մարդիւս էրիվէլի թուշնամին թախթա-խուռուսին է, աներեւոյթն ալ բիրեն, ուր չի բռնուիր ըմմա՝ կէրէկի կիպի կու կըճէ, վախիտէ անդին քէշտ ու կիւզար մախամլը սիվրի սինէք մին ալ կայ ըմմա՝ աս երկու կաթնավերները անոր քար կու հանին:

— Այնպէս է, շատ անհանգիստ կ'ընեն:

— Հէմ տէր-պապա, հէր իշտար ուր մեղաւորս գրոց մուխուֆ չիմ իսէ տը՝ Դաւիթ մարգարէին «Յիրէ որ շրջի ի խաւարի և ի ստուերս մահիւ» ըսածէն սա մէյնութիւնը կու հանիմ:

— Ինչպէ՞ս:

— Մալիւմ ա՛, Դաւիթ մարգարէն սապի սիւպեան իքէն պէշիկին մէջ պառկած վախտը բիրէն տեսեր է տը՝ զաննս «բիրէ որ շրջի ի խաւարի և ի ստուերս եօղանի» ըսած տ'ըլլայ ըմմա՝ սըղրատան Բէնը Յի ըրեր վէ եօղրանին ալ մահիւ ըսեր ին, մատէմ քի եաթախ եօրղան ըսուած թէճէ-միլլէթն ալ պիր նէվի գերեզման, մահու եաթախ ըսել է:

— Քուրուկ, աս ի՞նչ կիտնական մարդ է եղեր, վրայէն, չի ցուցուներ ամա...

— Հէլէ ան կաթնավեր թախտա-խուռուսին չիկա՞յ մի եա, ճիտը տակը մնայ, ասլա մէյնութիւն չի վերցներ, հէմ ես կ'ըսիմ ուր՝ Ասվածպետականութիւնը էկէր ատ մախլիւքը խալք ըրած ատենը անգամ մի մուատը հոտուըտար իսէ՛ խալք ընելէն մինպահաթ ճայմիշ տ'ըլլար:

(Բարձրածայն ծիծաղք)

Այն պահուն օրիորդ մը. — Հրամմեցէ՛ք, հրամմեցէ՛ք. ճաշը պատրաստ է ըսաւ, որով ամենքն ալ սեղանատուն իջան:

— Տիւտիւ հանրմ, ըսաւ Ահարոն աղան, հարսին մօրը, շիտտակն սա սուֆրային նիզամլը խուռուլուչէն բէք մէմ-նուն ու մէսուր եղայ:

— Օղջ ըլլաք, ան ձեր զաթութինն է, իրաւ, ձեզի կէօրէ բան մը ըրած չէնք ամա՛ էհ, իշթէ, էլտէն կէլտիղի դատար:

— Ալ ի՞նչ տ'ըլլար էֆէնտըմ, Ղալաթիայի Այնալըին լօգմանթան աստար չիշիտ մին եէմէքներ չի կրնար հանել, ընանկ չէ՞ մի տէր պապա:

— Այնպէս է Աստուած անիորձ պահեսցէ, միշտ և հանապաղ զսեղանս ճոխացուցէ, և երկար կեանս պարգեւեսցէ:

— Ան չէ ըմմա՛ տիւտիւ հանրմ, զաննս Սթամպօլի տիւներուն մէջ նօհտի եօհնի վէ դաբուսղա չին էֆիր:

— Վույ ճանրմ կնքահար աղա, խարուսխան ձմեռը կ'ուտուի:

— Էյ նօհտի եօհնի՞ն:

— Աֆ կ'ընես ատ լախըրտըդ չի հասկցայ:

— Ճանրմ ո՞ւր է սա լէպուկ ալ կը շինին:

— Իրաւ որ ես նէ լէպուկը գիտեմ նէ ալ էպրուկը կը ճանչնամ:

— Էֆէնտըմ, սա ու՞ր է գինիի մէզէ կ'ընին՝ լէպուկը չի կա՞յ մի եա:

Հարսին մօրաքոյրը. — Քուրուկ ալլահալէմ լէպլէպի ըսել կ'ուզէ:

— Հահ, հիւրիւմիւնք է, պէյնդ սիրիմ, մայմուռ հանրմ իշթէ խավրուլմիշ չեղած լէպուկը մսին վրայ զարնելով նօհտի եօհնի կը շինին:

— Հասկցա՛յ, նօհուտլու եահնի ըսել կ'ուղես:

— Հիւրիւմիւնք է:

— Գիտնայինք ատ խըտար սիրելի նէ՛ իրաւ որ կ'եփէինք:

— Պէյիս չիկայ, սայիր վախիթ մի կ'ուտինք:

— Բէկ աղէկ:

— Քա՛ աղջիկներ, գինի լեցուցէք, հրամմէ տէր պապա:

— Կենդանութիւն , աշուրնիդ լոյս եղիցի Աստուած
անփորձ պահեսցէ , ի խոր ծերութեան հասուցէ :

— Շնորհակալ ենք , տէր պապա :

— Խերերնին տեսնանք Յուդիտա տուտու , ուղուրլու
խատէմլի ըլլայ :

— Օղջ ըլլաք Մարթա խաթուն , տառօսը չիֆթէնե-
րուդ թոռներուդ ըլլայ , Զապէլիցայիս , Տիւրիւկիս , հէմէն
պօյերնին սիրեմ :

— Ինչալահ պարի սահաթով , պարի խըսմէթով :

— Ան չէ ամա , անցածները Զապէլիցայիս համար բե-
րուքէր ուզող մը կայ տէյի բան մը կը լխոցունէիք նէ ,
ի՞նչ եղաւ :

— Անիկայ ույմիչ չեղաւ , քուրուկ չըլչըպլախ մանչ
մըն է եղեր :

— Թիմարխանէն թող ղրկեն էֆէնտըմ , ֆէօն չափուխ
կը հագցունին :

— Էյ ինչալլահ ուղուր կը տանիք հետերնիդ տէ՛ շնորհ-
քով խըսմէթ մը կ'ելլայ :

— Իչալլահ , աշկըս ելլայ , խըսմէթնին կոց է , ասեղին
ծակէն կը մտնան կոր ամա :

— Քուրուկ , չեմ կրնար ընել , պազիսիները կ'ընեն չեն
ըներ թէնպէլ տօղլախ աղջիկնին հէմէն շըխ տէյի մէկուն
գլուխը կը հանեն , ան ալ գէհէր վէրկի մըն է , ես չեմ կըր-
նար պէճէրել , ի՞նչ մեղքս պահեմ :

— Ան ալ թալէհ մըն է , Բիօսէնց աղջիկը խահվէ մը
եփել չիյտէր ամա անանկ տեղ մը հարս կնաց քի՛ ծառքի
վրայ կը պըռնեն կոր :

— Է՛յ հրամմէ կնքահար աղա , գինիդ խմէ քի նորէն
պիտի լեցնենք :

— Տի խմիմ իշթէ : Էյ էֆէնտըմ տիւտիւ հանըմ , խա-
նէն տէվլէթ շէն ըլնի , իշթէ մեր Փիլիպոս պէկը ձեզի
թէսլիմ տ'ըլլի , հէմ փեսայ է հէմ զաւակ է , փեռայ ըսելը
զաւակ ըսել է , զաւակ ըսելն ալ տան տէր ըսել է :

— Օղջ ըլլայ , շնորհակալ ինք :

— Փիլիպոս պէկ, մէկ բարձի վրայ գլտորիք, աղա (կը
խմէ):

(Բարձրաձայն ծիծաղք)

— Հըմայեկս սա մէյլիւսին մէջ բարով խաղ մի կան-
չելը բէք մինասիպ է ըմմա:

Հարսին մօրաքոյրը — Ույ ճանըմ կնքահար աղա, սանկ
կէնէ աղւոր շէքէր մը ծամէիր:

Ահարոն աղան (մեկուսսի) — Ան շէքէրը քու լեզիւդ է
ըմմա՝ չիյտիմ ուր ղատիր տըլլա՞նք ծամելու:

— Հայտէ ճանըմ Ահարեն աղա, պաշլայէ քի ետքն ալ
հարսին փեսին թօխա ընել տանք:

— Գլխուս վրայ էֆէն տըմ, հիչ քու խօսքդ կօյրել
կ'ըլլա՞յ մի եա:

Ե Ր Գ

Դուն լի՞նք էիր որ զիս գսար,
Ի Ադանա պարսեգ մսար,
Պուշպուշ եղար լիարդիս դիւնաց,
Եքոր հնի աջօփս ինաց.

Ն Ա Գ Ա Ր Ա Թ

Էլի եկու կանաց կանաց
Նազու ֆաշի բարեւ բունած:

— Ո՛ւյ շատ ապրիս կնքահար աղա, աս ի՞նչ աղւոր երգ է:

Բարով եկիր դուն բարկ Արեւ,
Ծագեցար մեր տունն ի վերեւ,
Անկեց ես ֆու պօյրդ գովիւն,
Սեղի փիսանի նունանցունիւն:

Ն Ա Գ Ա Ր Ա Թ

Էլի եկու կանաց կանաց,
Նազու ֆաշի բարեւ բունած:

Չիփր մի խնամր երեսոյ գովիմ,
 Որ շուշրնկի կաշ կուշրնակի,
 Քրնչից միև աշ ծաւերոյ գովիմ,
 Ուր սրբնայի թեշ կուշրնակի :

Ն Ա Ք Ա Ր Ա Թ

Էշի եկու կանաց կանաց,
 Նազոռ քաշի քարեւ բունած :

Անկեց եւ քու աշխոյ գովիմ
 Ուր շահիկի աշկ կուշրնակի,
 Ան պիշխանի քիւնքոյ սիրիմ,
 Որ խուրնայի կու անակի :

Ն Ա Ք Ա Ր Ա Թ

Էշի եկու կանաց կանաց,
 Նազոռ քաշի քարեւ բունած :

Պաշի սկայի քերանոյ գովիմ,
 Ուր պատե՛ք իշի կուկնակի,
 Առդաներոյ ծարը սիրիմ,
 Իննիւն քակե կուկնակի :

Ն Ա Ք Ա Ր Ա Թ

Էշի եկու կանաց կանաց,
 Նազոռ քաշի քարեւ բունած :

(Երիտասարդ մը) — Ա.կանջդ խօսի, Բոժոժիկ :

Ահարոն աղան Բոժոժիկին անուներ լսելուն պէս՝ երգը վերջացուց, դէմքը խոժոռեցաւ և երիտասարդին դառնալով ըսաւ :

— Պարոն աղա, հըմայէկս ատ Պոժոժիկ մախուքին անիւներ տալ հիչ վաճիպ չէր, զէօրէ ան կաթնավերը մեր պաշ տիւշմանն է :

— Ինչո՞ւ, ձեզի ինչ ըրած ունի քի :

— Ալ ի՞նչ տանէր ճիտը տակը մնայ, փաշան տոտիկովը կլլող կատու շան տուղան մեզ թէլլալի տուաւ :

— Վույ վայ մեղքիս, պէօս պօյիւք մարդը ի՞նչ տէյի թէլլալի կուտան կոր, արսա՞ է ծախածնին :

— Կ'ըսես ամա քուրուկ, սա մերիններն ալ հէմէն տեղերնին մնան :

— Տիւտիւ հանըմ, թէլլալի տըվաւ կ'ըսիմ նը՝ մեզ զազէթային մէջ գրեց ու աշխըրքին չավ ըրաւ :

— Աշկը էլլայ պիլէկիմ :

— Անոր աչքերը եարմա չեն քի եկաց :

— Կու հայի՞ս մի էֆէնտըմ, մեր աղապէկը հալա ան կաթնավերին թարաֆտարու թիւն կ'անէ :

— Ես շիտակը կ'ըսեմ կոր, հէմ քեզի բան մը ըսե՞մ Ահարոն աղա, եկո՛ հետդ թօխա մը ընենք տէ՛ Բստոժիկին հետ հաշտըված եղիր, անիկա պէտքի մարդ է :

— Հըմայէկս ամենէն պիտուական բանը սա զէրտէլի բիլափէ է, եփողին մայները սիրիմ : Պատէլ թաամ վախիթ ունենանք իսէ՛ ատ խուսուսին վրայ միւզաքէրէ մի կ'անինք :

Ընթրիքէն վերջը Ահարոն աղան պարտաւորեցաւ մէկ երկու ժամ գլուխը վար դնել քնանալ, ըստ որում բաւական գինովցած էր : Նոյն միջոցին երիտասարդք և կուսանք երգեցին, պարեցին ու զուարճացան : Ժամը ճին Ահարոն աղան արթնցուցին որ ելաւ կնքահայրութեան պարտքը կատարեց, և գինիին թապախին պօլ քէսէէն երկու հատ մէթալիք տասը փարանոց ձգեց, « Տէր պապա, ազ վէրէն ճանտան, չօք վէրէն մալտան » ըսելով :

Այս արարողութիւնը կատարուելէ ետքը Ահարոն աղան հօռա պաշի եղաւ, և հետեւեալ երգովը հարսն ու փեսան խաղցուց :

« Ապուր կ'եփիմ մալեգե,
Քարին ներքեւ խլեգե,
Մեր Փիլիկը եար կ'ուգե,
Տիւսախները կիւ լրգե :

« Հարսնուկ աղուոր մազ ունիս,
Պիւլպիւլիւ բերվազ ունիս,
Խօսիս նեվապ չես ի ար,
Աս ի՞նչ խրսար նազ ունիս,

« Փեսայ եղող մրնչուկը,
Քեօեկն նստի մուսածե,
Թեւի բուլու ախեիցին,
Պըյըխը պուրմի՞ն կ'անե :

Հօռան կէս ժամ տեւեց, և Ահարոն աղան շատ յոգնե-
լուն, սենեկին դրանը մօտ դրուած թեւաթոռի մը վրայ
գնաց նստաւ շնչարգել :

Ժամը ծին քառորդ էր մնացած, արշալուսոյ մթնշաղ
առաջին լոյսը սկսեր էր երեւիլ, ուստի ըստ սովորութեան
օղիին խօնչան ներկայացաւ : Այս միջոցին փեսան կամա-
ցուկ մը հարսին մօրաքրոջը ըսաւ. « Առաջարկէ Ահարոն
աղային որ Սողոմոն իմաստունին քարոզը տայ մեզի » :

Տիկինը անմիջապէս գաւազան մը բերելով ձեռքը տը-
լաւ և ըսաւ. — Քուղում կնքահար աղա, աֆ կ'ընես ճէսա-
րէթիս ամա, տահա առտուան էքէյի վախիթ ունինք, մեզի
աղւոր քարոզ մը տայիր մտիկ ընէինք, սա, Սողոմոն իմաս-
տունին քարոզը ըլլայ :

Ահարոն աղան կռահելով որ այս առաջարկը փեսին
թելադրութեամբը կ'ըլլար, գոչեց.

— Էյլէնճէի՞ տելլանք, Փիլիպոս պէկ, առջի իրիյվընէ
ի վեր տէսթ տէսթի վրայ դրած սիւքիւթ մի կ'անէիր,
հրմայէկս ախշընին սահապ եղար ա' . . . արթըխ մէտէթ
էյլէնճէ կ'ուզի :

— Ույ ճանրմ կնքահար աղա, ատ ի՞նչ խօսք է, մեծա-
պէս շնորհակալ ենք, կ'ուզես նէ մ'ըսեր, ամա՛ սօն էլվի-
տա շէքէր մըն ալ ծամէիր :

— Էֆէնտըմ, արթըխ մեր շէքերն ալ հատաւ ճիկէրն
ալ, սըրան ձեր շէքէրին եկաւ :

— Քա աղջիկներ, սա իքսիրին թախըմը ներս բերէք :

— Էֆէնտըմ, ի՞նչ պէտք է պտանկ թախըմ մի զահմէթներ :

— Մեղայ Աստուծոյ, զահմէթը ին՞չ է, դուն մեր ըսածը երկուք կ'ընես կոր քի մենք ալ քու ըսածդ չնենք, ինթէ իքսիրին թախըմը եկաւ :

— Էֆէնտըմ, ատիկա հըմայեկս սարֆը նազար արէ, Սողոմոնին քարոզը տալու հըմար է իսէ նը ատիկայ չըլլալիք բան է, զէրէ առտու եղաւ, մինպահաթ փուռը տի գըտնուիմ ուր, հացերը մընչուկներուն թէվզի անիմ ճամբիմ, օր մի մեր օտան գալու ըլլաք իսէ՝ Սողոմոն իմաստունին «Պէօրտ քո թակոյկ ճախարակեայ, անպակաս ի գինւոյ խառնելոյ» ըսածին մէյնութիւնը կու հասկցնիմ ձեզի :

— Էյ Ահարոն աղա, ըսաւ երիտասարդ մը, ձեր տունը ու՞ր է, ըսէ մեզի որ օր մը պէլքի կուգանք :

— Գիւլուս վրայ տեղ ունիք պէկս, հրամմեցէք, հէմէն տարօսը ձեր պայվական տէօլլէթ խանէն ըլնի, վէ մօտ ժամանակու մէյ բարձի վրայ ծերանան. էկէր տուներնիս գիտնալուտ կը կամիք իսէ՝ Մահմուտ փաշան ի վեր թիքիլմիչ կ'ուլլիք, կուգաք խալքախճինոցին գլօխը, անկից տէվրիլմիչ կուլլիք դարվար, վէ տէվիլ տալով Պալի բաշա, ֆէօն Փիլիկ ախպօր բանած փուռը կու հարցընիք, վէ թէղկեահին վրայ ծառայականս պէնտէի Ահարոն կողմողէնցը գլուխը նստած կու տեսնաք :

Բոժոժիկ այս թարիֆը առնելէն ետքը՝ Ահարոն աղայէն առաջ դռնէն դուրս ինկաւ, ուխտելով միանգամայն որ օր մը փուռ երթալով Ահարոն աղային ներկայանայ և անոր հաշիւները աչքէ անցունէ :

Վ Ե Ր Զ




ԱՆՑԵԱԼ ԿԵԱՆՔ




ԵՐԱՆՈՍ ԱՂԲԱՐ

Կ Ա Մ


ԹԱՊԼԱՔԵԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ




ԿԱՏԱԿԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾ



✦ ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ ✦



ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈԼԻՍ


1925

Ե Ր Կ Ո Ւ Տ Ո Ղ

Ներկայ աշխատութիւնը՝ կէս դար յառաջ գաւառներու մէջ եղած կրթական վիճակին մէկ պատկերն է: Ժամանակիս յառաջդիմական ընթացքը բարեփոխած է այս վիճակն, և ի գաւառս, շնորհիւ ուսումնատարած նախաձեռնարկներու, թատերախաղիս մէջ տեսնուած յետադիմական գաղափարներու բոլորովին հակապատկերը կը կազմէ կրթական գործը:

Առաջադրեալ աւանդական իրադէպը հրատարակելով մեր նպատակն է ազգին կրթական վիճակին ի գաւառս ունեցած ժամանակակից ընթացքին հետ զուգակշռել:

Անշուշտ եմք որ ընթերցողք գոհ պիտի լինին մեր այս աշխատութենէն՝ որ մեզ համար միակ վարձատրու թիւն մը պիտի ըլլայ: S. Փ.



Ա Ն Չ Ի Ն Ք

Կորկոտ օղլի Գենարիոս

Մինէճի օղլի Դամիանոս

Չոր-թութենց Կոզմոզ

Սահակ օղլի Թորոս

} Գիւղին աղաները

Փիլիպպոս, Լուսարար, Ժամակոչ եւ Տնեսե

Երանոս աղբար, Վարժապետ

Պ. Գրիգոր Շարոցեան [Ուսեալ ի Պոլիս]

Պ. Ներսէս Ահարոնեան » »

Պ. Արսէն Վահուհի, Պոլսեցի վարժապետ

Գիւղացի իրիտասարդք

Եղելութիւնը կը կատարուի 1865ին, Հայարնակ գաւառի մը շրջակայ գիւղերէն մէկուն մէջ:



Տեսարանը կը ներկայացնէ աղաներուն ժողովատեղին , որ երբեան մինճերիներով և բարձերով զարգարուած է : Անկիւնը դրուած թագաթուղաին մէջ երեք չորս հատ երկայն ծխափայտեր կ'երեւան :

Տ Ե Ս Ի Լ Ա .

Կողմոզ և Թորոս , (եփր) Փիլիպոս

(Կողմոզ և Թորոս , որք երկայն ենթարիներ և վրայէն կրկնոց հագած ըլլալով , գլուխնին ալ խոշոր գտակներ ու չաթխր կապած են , անկիւնը քովէ քով ծալապատիկ նըստած ծխափայտ կը քաշեն : Կողմոզին ծնկանը վրայ բաց նամակ մը կ'երեւայ) :

Կողմոզ . (Վարագոյրբ բացուելու միջոցին երկու անգամ ուժով ծխափայտ քաշելէ եփր խոժոռածայն) — Մէ'նչուկ , Փիլիպպո'ս . . .

Փիլ . (Բարեւ բռնած կը մտնէ եւ խոնարհելով) — Ծառայ եիմ աղա' :

Կողմոզ . — Մինէ՛ճի օղլուին գնացի'ր :

Փիլ . — Հրամմանք է էֆէնտըմ . Ֆրսֆըսունկենց Մելիքոն ախպօրը հետ՝ մահուտ Դարտակ-փորուն տղուն պուլուխ մատտէին բույէթ ու թէսվիյէ ընելէն սըղրա՝ շիտտակ ֆէօս տի գայ :

Կող . — Կորկոտ օղլին ին'չ ըսաւ :

Փիլ . — Կէս սահաթէն տի գամ , ըսաւ :

Կող . — Անանկ է նը՝ խէյֆէ մին ալ էֆէ' :

Փիլ . — Ծառայ եիմ աղայիս : (խոնարհելով կը մեկնի) :

Թորոս . — Բաց ասիմ ու ոչ ամաչիմ էֆէնտըմ . օղորմած հոգի սահապ աղապաս , կենդանի աղօթքը բարեխօս , կ'ըսէր ուր՝ «Չըգ չըգ էտէն նալչա տիւր , իչ պիթիրէն ազչէ տիւր .» պինաէնալէյն , սա թախըմ մի տակը դարտակ

ճահիլ-ճիւմլիւկներուն խօսքը չի՛ տ'իլլի... մենք կլօրիկին
զօրութիւնը գիտի՞նք ա՛, սըրան անոր ուր գայ նը՝ քէօչէն
առնողը կ'օլլորի:

Կող. — Շիտտակ է. ֆախաթ անգամ մի էսասը մատ-
տէին տիպածաէն մուխուֆ ըլլալու մուճիպով մէյլիւսը
թօփել տուի. վախիտէ, ես աս թավսիէյին ասլա սէմմ ու
իթիպար չի տի անիմ, ատոնց բերած հերիֆը խապուլ չիմ
անիր վէսսէյամ:

Թոր. — Էկէր ուր գործը խապուլ ընելու մէրքէզն հաս-
նի նը՝ նա ո՞ւր է, հին տուն մը ունէի տրպատանը պախչ
արեր էի, վէրտիմ՝ վերմէ՛մ էֆէնտըմ:

Կող. — Ծառայականս ալ պին սէքիզ իւզ ալթմըչ թա-
րիխէն թախըմ մի աֆիմէրտէ իւրիւսնօմէներ ունէի, աշ-
կերտտիւնին հիյպէ տի անէի. մատտէն թերս քէքչէ ըլլայ
իսէ՝ գիրքին ճօթը պիլէ չիմ ցուցներ:

Տ Ե Ս Ի Լ Բ.

Նոյնք, Գենարիոս և Դամիանոս

Գեն. — Ծառայ եիմ աղաներուս: (կը բարեւեցն ու կը
հօսիցն):

Թոր.) (Միաբերան) — Բարեւ գայ վրանիդ:
Կող.)

Գեն. Դամ. (Նոյնպէս) — Բարին արեւնիդ էֆէնտըմ:

Կող. (Կը ձայնէ) — Մէ՛նչուկ, Փիլիպպոս. (Փիլ. մտնէ)
մէ՛նչուկ չըպուխ բե՛ր, վէ աղաներուն խէյֆէն էփելէդ
սըղրա՝ գնա՛ Էրանոս աղբարը ֆէօս կանչէ:

Փիլ. (Ծիսափայտերը տալէն ետք) — Ծառայ եիմ աղանե-
րուս, Ահարօն օղլու Ներսէսն ու Շարոցենց Գրիգոր պէն-
տէներնիդ եկան:

Կող. — Ատոնց ըսէ ուր՝ խէյֆէ՛ օճաղին քչիյ մի պէք-
լէմիչ անին: (Փիլիպպոս կը մեկնի):

Թոր. — Էֆէնտըմ, մալիւմնիդ է ուր խամուրքեար մա-
հուտ Ահարոնին տղան ու Շարոցենց Գրիգորը ալթմչպիր
թարիխուն Ըստընպօլ գնացեր էին. չորս տարին միւթէճա-

վիւզ ֆէօն ախգուաթա ընէլէ սըղրա՝ անցած շաբթուս էլեր վիլէյաթ եկեր ին . անճախ , հետերնին ալ պիչիւմսիզ հէրիֆ մի բերեր ին ուր , մեր աշկիրտտիւնին մէջ վարժըպետութիւն անէ :

Դամ . — Ի՞նչ խալթ կ'անին , ատոնք ո՞վ էն ուր քընթերնին ասանկ մատտէնրու մէջ կու խօթին :

Գեն . — Մենք ֆէօս նստեր էնք իսէ , պա՞լ խապաղի եինք :

Կոզ . — Պա խուսուս , Ըստընպօլի մեր հէմշէրիներէն Չաթալ խանի օտապաշի Տիւտիւկենց Աստիւրէն ալ թավսիյէնամէ մի բերեր ին :

Թորոս աղա , քէրէմ ու հիմմէթ անէիք ու սըվի կարդայիք : (Ծնկանը վրայ դուած նամակը կը յանձնէ , այն միջոցին Փիլիպպոս սուրն կը բերէ , Թորոս նամակը կարդացած ժամանակ միւսներն ալ քրոք քրոք ձայնով սուրներնին կը խմեն) :

Թոր . (Հին ձեւով ակնոց մը դրած կը կարդայ .) — «Առ իմ պայլական գեղական աղաներուս .

«Մալիւնի իդ լինի ուր՝ զիր թարիխէս իրեք օր էոաջ մահուտ խամուրքեար Ահարոնին տղան Ներսէսն ու Շարոցենց օղլիները վիլայաթ գալու խավլ ու խարար տուին նը՝ ադ պայլական հէմշէրիներն՝ ուր աստեղը էքէյի կարդալ թահսիլ արեր էին , վիլէյաթ չեկած էկան իմ էթէկներս պագին ու ըսին թը՝ էկէր ուր քու մեծականութիւնը կու կամիս նը՝ վուսմունքականութեան լէզէթը առնելնուս հըմար՝ կուզինք ուր մեր գեղը հետերնիս նոր եէթմէ վարժըպետ մի տանինք : Խիւլասայի քէլամ , քիչ շատ մեղաւորս ուր Ստընպօլ կը գտնուիմ նը՝ իրիճանին խապուլ արի , վէ ադ գտած մօնչերնին ալ զիր թարիխովս հետերնին ճամբայ հանեցանք . էլէլ հիսապ ատոր վազիֆականութիւնը ձեզի ձգնցանք . պա խուսուս աս կիրս գրած վախթս , մեր հէմշէրիներէն շէմշիյէճի Օղաթափ էմմին վըրայ էկաւ , վէ մէնչուկը տեսաւ նը՝ «Քանի մի տարի էոաջ ինծի կօյրած շէմշիյէ մի շինել տուաւ , միյանսըզ մանչուկ մի է ըսաւ ծառայականս ալ տտոր թահգիքն խապուլ արի . ուզուն սէօզիւն

ղըսասը, խաթըրիս պինաէն ուր հիւրմէթ կ'անիք նը՝ ադ էկած վարժապետը մեր աշկերտ-տիւնը դնէք ուր՝ սէնէ 1860 թարիխուն թախսիս եղած սահմանդրուքթան նիզամիսամէին մուճիպով նոր վուսուճնէականութիւնը թէօրէթմիշ անէ՝ չիւնքի, ժամընկու յօտօսը անանկ էամիշ կանէ ուր՝ հին վարժըպետներուն խաֆաները փոխինք. ասոր մուճիպ, յօժար կամօքս սա թավսիյէնամէն կու գրիմ վէ իրիճա կանիմ ուր իրիճաս խապուլ անէք, ողջ լերուք ըմմէն: Մեր տունն ալ խօսիք ուր՝ Աստուր աղայիս աս փոստային գիր չի տալուն սէպէպն սա է ուր՝ աս վարժըպետին հախուն մեծ տաղաւաղայի մէջ է եղեր: Խաթուն մօրս ձեռքը կու համբուրիմ, հարսընրին ալ կարօտով աշկունքը կու պագնիմ, վէ չօճուխներուն վէ դայրիւհիւմ բարեկամներուն, վէ դէօն դրացիներուն ըմմենուն ալ մախսուսէն բարեւներս թէպլիղ անէք:

Սեկե 1865 իյուլ 13
Ըսընպօղ Չարաղ խան

Ողջ լերուք, Մառայ Տեառճ
Մեղաւոս
ԱՍՏՈՒՐ ՏԻՒՏԻԿԵՆՅ

Դամ. — Վախիտէ, աս գիրը նիզամի տայրէսին շարթլու շուրութլու գիր մի է ըսէ թը՝ աղբա՛ր, տնոնցմէ վարժըպետ ուզող եղա՞ւ մի եա, մեր էրանոս աղբարը ի՞նչ է եղեր... մէճնուն չի՞նք մի անկից:

Կող. — Հա՛յ հա՛յ, էրանոսին պէս վարժըպէտ աս գեղը տահա նէ էկեր նէ ալ տի գայ. հէրիֆը մէկ հայելուն՝ պաշ բարմաղիով շարականը կու բանայ:

Թոր. — Թամամ, շիտտակ է. սալթ վեց տարի Ըստընպօղ Պալի Փաշային փուռը թապլաքեարութիւն ըրաւ ուր՝ հիսապճա բէք աչըխ կէօղ է. մէկ սանիյէին մէջ, կիրմէ չըխման, գինճիլլի թախսիմը վէ դարաճիւմէն պուղտիկ մատէն կու հանէ:

Գեն. — Հաթտա իր իշկիւղարութան վէ տէֆթէր թանգիմ անելու ուսուլին մէջ վարպետ բան մի ըլլալուն հըմար չէ՞ ուր Բաստեղենց պուլաշուխ մատտէն թէմզցունելու միւճիպով հավայէն էղհարը իֆլասի տէխթէրը իրեն

չինեւ տուանք, անանկ շուրութլու տէֆթէր իմ ուր՝ պէ-
նիմ տէյէն զուռնագին բապուճները ամբ կու գնի:

Դամ. — Աֆէրիմ էրանոս. հէրիֆը թա՛մ վարժպետ է
եղեր. էֆէնտըմ, կարճ խօրըթինք, մեր աչկիրտ տիւնին
մէջ պաշխա մարդ խապուլ չի տի անինք, վէսսէլամ:

Գեն. — Էկէր ուր ադ բերած մարդերնին զապուլ
անինք իսէ՛ արթըխ ժամուն էշիկէն ներս չէ տի մինիմ:

Կսզ. — Պինայէն ալէյհ, հըմայէկս ադ մարդիկը ֆէօս
կանչինք ու խարարնիս թէպլիղ անինք:

Թոր. — Բարով կուլլի:

Կոզ. — (Կը ձայնէ) — Մէ՛նչուկ, Փիլիպպո՛ս:

Փիլ. (Մսնելով) — Ծառայ եիմ, աղա:

Կոզ. — Մէ՛նչուկ, Իրանոսը ո՞ւր է:

Փիլ. — Էֆէնտըմ, չօճուխներէն մէկուն վարտիքը
քօրկապ է եղեր, անի կուքակէ. պահ մի ետքը տի գայ:

Դամ. — Աֆէրիմ էրանոս, վարժպետ ըսածդ ասանկ
տ՛ըլի:

Կոզ. — Տա դուրսը կօյնող մօնչերուն ըսէ ուր ներս գան:

Փիլ. — Չաթալ-չէքիւճ հէրիֆն ալ հետ բերե՞ն մի:

Գեն. — Խա՛յըր, անի թող խէյֆէ օճաղին պեքլէմիչ
անէ:

(Փիլիպոս կը մեկնի. մսնեն ներսու եւ Գրիգոր)

Ներսէս. — Բարեւ աղաներ:

Կոզ. — Ծօ ներսէ՛ս, չորս տարի մուխատտէմ Ըստըմ-
պօլ գնացիր իսէ, այբը տեսնայիր նը՝ բէնը չարչուն կու
քաշէիր, ֆէօն ֆէս մի ու նոր սալթամարգա մի հագար
տէյի մա՛րդ եղար:

Դամ. — Ատոր հըմա՞ր Ըստըմպօլ գնացի ուր, հավուն
բիլիճ ող թիւրին ալ զըլը՞նճ տ՛ըսիս:

Ներսէս. — Յիրաւի, հոն որ գացինք, բան մը չգիտէ-
ինք, բայց Ղալաթիոյ եկեղեցին կիրակնօրեայ դասատուու-
թիւն կ՛ըլլար, մենք ալ ուսման փափաքողներ, հոն եր-
թալով կարդալ գրել սովրեցանք:

Գրիգոր. — Եւ գիտնալով որ մեր գիւղին վարժապետը
թափաքեարութենէ առաջ եկած մարդ մը ըլլալուն, մեր

զաւակներն ու եղբայրները անոր ձեռքը մնալով բան մը չպիտի կրնան սովորիլ...

Դամ. — Ծօ՛ղուն ե՞րբ կարգուեցար ուր զաւկի ալ տէր եղար :

Թոր. — Սըւոր նայեցէք, մեզի քիւլ տի կլլեցնի. ծօ՛ղուն քենէ պաշխա ախպար ունի՞ս մի եա՛ :

Գրի. — Մեր եղբայրները որ կ'ըսեմ, մեզմէ փոքրերուն համար կ'ըսեմ, ուստի Ստանպօլ գտնուող հէմչէրիներուն խարարովը հետերնիս ուսեալ պատուելի մը բերինք որ վարժապետութիւն ընէ :

Կող. — Վէսսէլամ, ա՛լ խապէրի տէ զուրնատան. ծօղուք մեզի ֆէօս պալխապաղի տե՞ղ էք դրեր, ադ մարդը խապուլ չի տի անինք :

Թոր. — Էրանոս աղբօրը ի՞չ միւճիւպսով չէք հաւնիր :

Ներ. — Ճա՛նըմ, ադ Երանոս աղբարը թող ա՛լ երթայ իր տունը նստի. գիւղին տղաքներուն մե՞ղք է :

Դամ. — Սըվոր նայեցէք, տղաքներն ալ կու մեղքնայ, մենք մեր տղաքը վարժպետ չի տի անինք. Էրանոսին կէսը թահսիլ անին նը՛ տահա ի՞չ կ'ուզինք :

Գրի. — Բայց Երանոսը բան մը չի գիտեր :

Գեն. — Ո՞վ ըսաւ. անցածներս ալ եէնի եէթմէ չաթալ չէքիւճ հէրիֆ մի եկեր էր, Էրանոսին իմթիխան արինք նը՛ բերանը չկրցաւ բանալ :

Կող. — Սապուլ չինք անիր, վէսսէսամ :

Ներ. — Սապուլ չէք ընէր ամա, Ստամպօլի հեմչէրիներն ալ զազէթաներուն վասիթայովը Պատրիարքարանին կ'իմացնեն թէ զուք՝ հոս ձեր ուզած մէկ թապլաքեարը, որ տնտեսութիւն անգամ արժանի չէ ընելու, վարժապետ ըրեր էք ձեր տղոցը, և խամուրքեարներէն մէկն ալ թէ՛ լուսարար, թէ՛ ժամակոչ և թէ՛ տնտես կարգեր էք :

Գեն. (Կամաց մը բովիցի) — Ի՞նչ խալթ կ'անէ, աղա՛, Փիլիպպոսը տնտես չեղած զաթը կարգուկ էր :

Կող. (Գրիգորի) — Գէ՞չ եինք ըրիր, պարոն աղա, իտարէ կ'անինք :

Գրի. — Այս տեսակ խտարէ չուզեր, մեր զաւակները ժամանակիս պահանջից համաձայն կրթուելու են. այս պատուելին կարող մարդ մըն է, և եթէ կ'ուզէք, Երանոսին հետ անգամ մը քննենք:

Դամ. — Հա՛հ, աղէկ կ'ըլլի. ուզուն սէօղին զըսասի... հրմայէկս քըչիյ մի խէյֆէ օճաղին պէքլէմիչ արէք, աղաներուս հետ մէշվէրէթ մի ընելէ սըղրա խարարնիս թէպլիպ կ'անինք:

Գրի. (Մեկնած ասենք ընկերոջը, կամաց մը) — Թերեւս դարձեալ չհամոզուին, ուստի ընելիքնիս այժմէն որոշելու ենք:

(Ներսէս եւ Գրիգոր կը մեկնին)

Կող. — Խա՛յրը էֆէնտիմ, խապուլ չի տի անինք: Էրանոսը գալու ըլլայ իսէ, անցածներս ալ էկող չաթալ-չէքիւճ վարժպետին հարցուցածնիս ասոր կու հարցնինք, ճուղապ չի տի կրնայ տալ, քնցուի կ'անինք:

Դամ. — Թամամ, խարարնիս խարար է. Ըստըմպօլի հէմշէրիներուն ալ կու գրինք ուր, ինթիխամ արինք իսէ Էրանոսը վրայ էլաւ:

Տ Ե Ս Ի Լ Գ.

Նոյնք և Երանոս, որ շալվար և երկայն նիւպպէ հագած է. մինչեւ յօնֆերը իջեցուցած խոշոր գսակին բերնէն մաս մը վեր՝ իրասու վրայ երեք հաս գոյնզգոյն եազմաներով չաթխը կապած է:

Երանոս. (Բարեւ բռնած կը մտնէ եւ խոնարհելով) — Մառայ եիմ աղաներուս:

Կող. — Էկոր գա՛ս, Էրանոս աղբար. Ըստըմպօլցի պիչիմսիւզ հէրիֆ մի բերեր եին ուր՝ մեր աշակերտ-տիւնը վա, ժպետ տի դնին, մենք ա՛սլա խապուլ չըրանք իսէ թը՝ էլան ուր՝ Էրանոս աղբօրը հետ ինթիխամ տի անինք:

Թոր. — Բապուճս ի վար, մենք քեզի կիւվէնմիչ կ'ըլլինք. անցած տարի քէնտի կէլէն հէրիֆին ի՛չ թէրթիպ ուր իթթիխազ արինք նը՝ ասոր ալ անանկ կ'ընինք. յու-

սով եիմ ուր իւստիւն տ'ելլաս... նա օր քերականութիւն կ'ըսին նը՝ քցչիյ մի անոր մի անոր մէթանէթը տո'ւր ուր, հիչ շիւպհէի քօչէ մի չի մնայ:

Երանոս. — Ծառայ եիմ աղաներուս. մալիւմնիւյ է ուր՝ աս ժամընկու եէնի-եէթմէ վարժպետները պիչիմսուզ վէ դայտէսիզ քերականութիւն մի իթթիխազ եին արիր. մէ-սէլա, «Ուղական Հաց, Սեռական Հացի վէ Հայցական «զՀաց»ով մատտէն կու լումունցունին, մէյնութիւնը չինի-տար, ֆախաթ ծառայականիս իթթիխազ արած Չամիչին քերականութիւնը Հացին մէյնութիւնը բէք նիզամով կու-տայ. Ուղական Հաց՝ էքմէք. Սեռական Հացի՝ էքմէկին. Տրական Հացի ի հաց՝ էքմէկին, կէնէ էքմէքին...

Կող. (ընդմիջելով) — Թամամ է, ըմմէն մարդուն մու-տածականն ալ գիշեր վէ ցորէկ էքմէքին հըմար է:

Եր. (Շարունակելով) — գործիական հացիւ՝ էք-մէք իլէ:

Թոր. — Շիտտակ է, էքմէքով կու կուշտանանք.

Եր. — Պառարական զՀացիւ՝ էքմէկին էթրաֆը, քէ-նարըը:

Կող. — Բիշկին ըլլայ իսէ՝ համով կուլի քէնարը:

Եր. — Բացառական ի Հացէ՝ էքմէքտէն:

Թոր. — Աֆէրիմ, կէչմէ էքմէքտէն:

Ե. — Պատմական զՀացէ՝ էքմէկին իւստիւ:

Դմ. — Թամամ, հացին մատտէն ըմմէն բանէն իւս-տիւն է:

Եր. — Ներգոյական ի հացի՝ էքմէկին իչի:

Թոր. — Ատի ալ առկայ չունեցող էխտիեարներն հա-խուն խայըրը կուլի:

Եր. — Հայցական զՀաց՝ էքմէկի կէօսթէրիր:

Դամ. — Պէլի, հէր թապլաքեար էքմէկինի կէօս-տէրիր:

Եր. — Կոչական ո՛վ Հաց՝ եա՛ էքմէք:

Կող. — Թամամ, անօթի էղողը թապլաքեարը տեսնայ իսէ «եա՛ էքմէքճի» կու պոռայ:

Եր. — Իշթէ էֆէնտըմ, աս խուսուրները ծառայականս մէնչուկներուն պէյնին քօշէները եէուլէշտիրմիշ կ'անիմ, ֆախաթ ժամընկու ենի-եէթմէններուն պէս շաթալ-չէթիւճ լաթեր չի հագնելուս, իթիպար չունիմ:

Կող. — Էրանո՛ս, խարարնիս խարար է. ան ուր մենք ֆէօս նստեր ինք նը՝ մեր խօսքը տ'ըլլի. մենք պալխապաղի չինք. (Չայնելով) Մէ՛նչուկ, Փիլիպպո՛ս, (Փիլ. կը մտնէ) տա դուրսը խէյֆէ օճաղին պէքլէմիշ անողները ֆէօս բե՛ր:

Թոր. — (Փիլիպպոսին) — Վէ պատեհու գնա աշկերտտիւնը պէքլէմիշ արէ ուր՝ մօնչուկները դաղվա նիզա չանին:

Դամ. (Փիլիպպոս մեկնելեն ետք) — Էրանոս քեզ տեսնինք, պէյնիդ լայըխու մէթանէթ մի տուր ուր՝ սա հէրիֆը օռով թօխով քնցուր անինք:

Տ Ե Ս Ի Լ Դ.

Նոյնք, Գրիգոր և Արսէն

Կող. (Արսէնին) — Պա՛յվէլի, աղաներուս մէյլիւսը խարար տուաւ թը՝ հէր իշտար ուր Ըստըմպօլի Չաթալ խանի օտապաշիէն թավսիյէնամէ մի թախտիմ կ'անիք նը՝ մենք ալ անգամ ինթիխամ տի անինք՝ դէօրէ, քաղքէն ըմմէն Յստըմպօլ գնացողները հետերին մէյմէկ վարժպետ թախմիշ անին վիլէյաթ գալու ըլլան իսէ՛ գեղը վաժըպետի թուրչիով տի լեցնինք. պինաէն ալէյն ինթիխամ տի անինք:

Արսէն. — Ամենայն սիրով՝ պատրաստ եմ պատասխանել:

Կող. — Պինտ էռաջ, անիւնդ ի՞նչ է:

Արս. — Արսէն Վեհուենի:

Թոր. (Բարձրաձայն ձեծաղելով) — Հա՛հ, հա՛հ, հա՛հ, (Կողմնոգին) էֆէնտըմ, ան է ուր ՚երսէն վախ ունի իսէ, ինտո՞ր վարժպետ տ'ըլլի:

Գրի. — Ներսէն վախ ունի չըսաւ, Արսէն Վահուենի ըսաւ:

Դամ. — Ատ ի՞նչ պիչիմ անիւններ է ուր իթթիխազ եին

ըրիր. նա ո՞ւր է, անցածներս էկողին անիւնն ալ թօփափ
բան մի էր:

Թոր. — Պէլի, վրան չամուր ըսին:

Գրի. — Վրան չամուռ չէր, Վռամշապուհ էր. մե՛ղք
որ Հայ անուները չէք գիտեր:

Կող. — Վա՛յ կիտի անիւններ վա՛յ. աստար տարուան
Փիլիպպոս, Թորոս, Կողմող, Էրանոս վէ զայրիւհիւմ պայվա-
կան անիւններնիս պիլէ. պաթալը հանիլ կ'ուզին:

Դամ. — Նէ իսէ, պայվէլի, քանի՞ տարու ես:

Արս. — Երեսուն և հինգ:

Դամ. — Ամա՛ն, պա՛յվելի, քէրէմ-^արէ, քըշիյ մ'ալ
առղաղ սըխմէ ուր՝ պարապար պոյ նետինք. աղ բաշա
պըյըխներդ 40ը անցած ըլլալուդ իսպաթ մին է:

Գրի. — Ճա՛նըմ, հիմա ատանկ բաներ հարցնելու ի՞նչ
տեղը կայ. քանի՞ տարու կ'ուզէ՞ ըլլայ. դուք գիտցածին
նայեցէք. և եթէ տարիքը պեխերուն երկայնութենէն պիտի
հասկնաք, շա՛տ ողորմելի մարեր եղած կ'ըլլաք:

Կող. — Օղորմելին դո՞ւն ես, հէ՛րիֆ, ինթիխամ տի
անինք:

Գրի. — Ուրեմն ըրէ՛ք, լմնցուցէ՛ք:

Կող. — Պա՛յվելի Հաւատով խոստովանիմը գիտե՞ս:

Արս. (Ջարմանայ, եւ վայրկեան մը մտածելէն ետք)

— Այո:

Կող. — Քանի՞ տիւն է:

Արս. (Նոյնպէս) — Քսան և չորս:

Կող. — Մէկ պօչէն բռնէ մինչեւ մէկալ պօչը գնա,
քանի՞ այբ կայ:

Գրի. (Ապեամ) — Այդ ի՞նչ ըսել է:

Կող. — Ի՞նչ տ'իլլի ուր, պարոն աղա, ինթիխամ ըսել
է (Արսէնին) պայվելի, ճուղապ տուր:

Արս. — Բայց այդ հարցուցածնիդ՝ Հաւատով խոստո-
վանիմին հեղինակը, Ներսէս Շնորհալիւ անգամ ուշադրու-
թեան առած չէ:

Կող. — Ատոր պէյնամազ էօզիւրի, կըսին, Էրանոս աղ-
բար դուն ըսէ՛:

Եր. — Էֆէնտըմ, քսանը չէօրս տիւնէ միւթէճավիւզ
Հաւատով խոստովանիմին մէկ պօչէն մէկալ պօչի այբերուն
ճէմը, եէքունը պալիղը վեց հարիւր եթմիչը չէօրս է.
ասոնց 17ն ալ տանկլօխ եին. սալթ «Եւ ողորմեա քո արա-
րածոց և ինձ բազմամեղիս» ները հարուր էոսունը վութը
այբէն միւթէճավիւզ եին :

Կոզ. — Պա՛յվելի, տեսա՞ր ուր չի գիտցար, մէկ խա-
պահաթ :

Գրի. — Բայց, ասանկ քննութիւն չըլլար :

Դամ. — Ծանրդ կ'ըյրէ. պարոն աղա, մենք ասօր աս
տեղս Փետրղանի՝ թըթիւի չինք. «Ախշինկը իր խիլվին հա-
վային քճգիս նը՝ զուրնաճուն հարսըն կուլլի» կ'ըսին. պինաէն
ալէյն, մենք ինթիխամ տի անինք : Կօրկօտ օղլի, հրամմե-
ցէք, սըրան ձերն է, դուք ալ բան մի հարցուցէք :

Գեն. — Պա՛յվէլի, սա Յակոբ նահապետը ուր՝ էրազին
մէջ նէրտիվէն մի տեսաւ, ադ նէրտիվէնին մէկ պօչն գե-
տինը մէկալ պօչն ալ էրկինքն էր, հըմայէկս ադ նէրտի-
վէնը ո՞ւր մնաց :

Կոզ. — Տէ ցատկէ՛ տիրացու հըմայէկս ուր պօյըդ տես-
նիմ. աֆէրիմ Կօրկօտ օղլի. ուր ալ գտար :

Այս միջոցին Ներսէս սեսարանը կու գայ, եւ Գրիգորին
հետ մեկ կողմ փառուելով, դուրսը եղած կարգադրութեան
վրայ ցածէն կը խօսին, ուրախութեամբ :

Արս. — Բայց այդ հարցուցածնիդ երազական բան մը
ըլլալուն, անկարելի է պատասխանել :

Գեն. — Երազականն ի՞նչ ճիվերս է, ճուղապ տուր :

Արս. — Բայց պէտք է գիտնաք որ Յակոբ նահապետ
այդ սանդուղը իր երազին մէջ տեսաւ, երազը իրականու-
թիւն չէ՛ :

Գեն. — Խալթ էս ըրիր, պարկէնքլի Աստուածաշունչին
մէջ ան նէրտիվէնը ըմմէն օր աչօքս կու տեսնիմ. տեսա՞ր
ուր չի գիտցար. էոաջ էկուր էրանոս, մէյնութիւնը տուր :

Եր. — Էֆէնտըմ, ադ նէրտիվէնը Եաֆաէն մինչի էրու-
սաղիմ էրկնցած է ըմմա՝ մեղաւորներուն չիրեւար :

Կող. — Պայվելի, էղաւ էրկու խապահաթ:

Արս. — Բայց...

Թոր. — Դամիանոս աղա, սախըզ մի ալ դիւն ծամէ:

Դամ. — Պայվելի, հէլպէթտէ հիսապի ալ աշինա էք.

ըզհարը իֆլասի շարթլը շուրութլը տէֆթէր մի կրնա՞ս
թանզիմ անել. մէսէլա, հէլիֆին մէկը 300 ղղչ. ի մաթլի-
լիւպաթ մի տի ունենայ միւթէվֆա մէկուն վրայ, ադ
բարան անոր հետ հողին տակը չի թաղելու հըմար՝ ինքն
ալ 3000 ղրուչի թիւճարին բարան տի ուտէ վէ անոր կէօ-
րէ իֆլասի տէֆթէր մի թանզիմ տ'իլլի:

Արս. — Բայց ատոր խարդախութիւն կ'ըսեն:

Դամ. — Խարդախութիւնը ի՞նչ ճիվերս է, իւշկիւզարու-
թիւն կ'ըսին. էրանոս աղբարը իշթէ աս խուսուսին մէջ ալ
պիրինճի է. հավայէն էզհարը իֆլասի տէֆթէր մի թանզիմ
չընող մարդը՝ վարժապետ չըլչիր, վէսսէլամ:

(Գրիգոր եւ Ներսէս ասդին գալով ունկնդիր կ'ըլլան:)

Թոր. — Պայվելի, բան մի ալ ես տի հարցնիմ, Մեռ-

եալ ծովը վար է, վէ ի՞նչ միւճիպով մեռեալ կ'ըսին:

Արս. — Երուսաղեմ, Պաղեստինի մէջ է:

Կող. — Շիտտա՞կ է մի էրանո՞ս:

Եր. — Նէ՞ մինասիպէթ, էֆէնտըմ, միսամուրքեար ող-
որմած հողի տէտէէս մեր գիտցածը սա է ուր՝ ադ ծովը
Չինիմչինի մէջ է, վէ վախթով մարը քօլէրայէն մեռնելուն
սէպէպովը անիւնը մեռեալ ծով մունացեր է:

Գրի. — (Բարկացած) — Բայց աս ի՞նչ տեսակ քննու-

թիւն է, աս ի՞նչ խայտառակութիւն է:

Կող. — Կախարդութիւնը ձեր ըրածն է, էֆէնտըմ մեր
հուզուրն ալ տահա բերանդ կու բանա՞ս. եարըմ չարըխով
Ըստըմպօլ էրթալէ ետքը գալու որ ըլլաք՝ ասանկ թախըմ
մը պօշ հէրիֆները մեզի հետիյէ՞ զու բերէք. պին սէքիզ
եիւզ ալթմըչէն պէրի պաշխա հիյէթ մի քէսպ արեր էք
իսէ թը՝ Ասվածպետականութեան հիմմէթովը ձեզի պէս
ճահիւլ ճիւմլիւքներու խօրըթաներուն ա՛սլա սէմմ ու իթթ-
պար չի տի անինք: էրանոս աղբար, հայտէ գնա՛ աշկերտ
տիւնը նստէ, մեր գեղին վարժապետը դիւն ես:

Եր. — Ասվածպետականութիւնը աղաներիւս մէկ օրեր-
նինքրիւր հազար ընի, էֆէնտրմ: (Հպարտութեամբ կը մեկնի:)

Ներ. — Կողմող աղա, ետքը պիտի զղջաք, եկէք խօս-
քերնիս մտիկ ըրէք:

Կող. — Սո՛ւս կ'ըսիմ քեզի, ան ուր ես քուկին տա-
տիդ էհպապն իմ նը՝ հէլպնթտէ իմ ուզածս տ'իլլի:

Թոր. — Հասըլը աս գործը անանկ տի անինք ուր՝ մէ-
կիկ մէկիկ սա քապուճիս ճօթը տի պագնիք ու մեղայ տի
պօռաք:

Գրի. — Քանի որ դուք որոշած էք քաղցրութեամբ
ճամբու չի գալ, մենք ալ կը պարտաւորինք ամեն բան
յայտնել ձեզի. արդէն գիտէինք որ դուք ասանկ պիտի ընէք,
ինչպէս որ երկու տարի առաջ ալ Պոլսէն եկող վարժապե-
տին ըրիք. բայց պէտք է գիտնաք որ այսուհետեւ մեր վար-
ժարանները ու եկեղեցիները ձեզիպէսներուն ձեռքը չպիտի
մատակարարուին. այլ ևս անցած է այն ժամանակը, որ
դուք տնտեսութիւն ընելու նպատակ արժանիք չունեցող
թապլաքեար պօզմասիները վարժապետ ընէք: Մենք այս
անգամ Պօլսէն եկած ատեննիս, հետերնիս բերինք նաեւ
Կեդր. Վարչութեան մէկ հրամանագիրը որուն մէջ ըսուած
է թէ վարժարանները, ըստ Սահմանագրութեան, քուէով
ընտրուած թաղականաց և անոնց օժանդակ հոգաբարձու-
ներու ձեռք պիտի կառավարուին:

Կող. — Վա՞յ, ատանկ բանե՞ր ալ ըրիք:

Ներ. — Հապա ի՞նչ գիտցաք, առանց ձեզի իմացնելու,
խելքը գլուխը եղող գիւղացիներէն ստորագրութիւն ժող-
ւելով Պատրիարքարան գիմեցինք և այս հրամանագիրը
առինք: Առաջնորդնիս, որ անդիի գեղը գացեր է, վաղը
գալուն պէս այս հրամանագիրը պիտի գործադրէ. «Կնքեալ
մեծ նամակ մը կը հանէ կը ցուցնէ՝ աղաները կը զարմանան»:

Գեն. — Ան է ուր ազգին գործերը մեր ձեռքէն տի առ-
նիք նը՝ հապը կլլած էք, չիւնքիւ, «Զըգ չըգ էտէն նալչա
տուր, իչ պիթիբէն ազճէ տիւր»:

Կող. — Պինատէն ալէյ, 5 տարիէն սըղրա տի կործանիք:

Ներ. — Աստուած խելք տայ ձեզի. երանի՛ թէ հինգ տասը տարիէն ետքը ծնէիք, վասն զի այն ատեն ուսման և գիտութեան հրաշալիքները պիտի վայելէ աշխարհ, և ահա այն ատեն պիտի ըլլայ այն երջանիկ օրը՝ որ գիտութիւնը հարստութեան հետ միանայ:

Չայներ. (Դուրսէն) — Նոր վարժապետ կ'ուզինք, նոր թաղական ու նոր հոգաբարձու կ'ուզինք:

(Աղաները ափ ի բերան իրարու կը նային):

Դամ. — Աս ի՞նչ բաթըռտի է: (Փիլիպպոս սարսափահար ներս կը վազէ):

Փիլ. — Աղաներ, գիւղին թէքմիլ մարդիկը դուռը ափ առին: (Աղաները սարսափահար ոտի կելլեն: Դուրսը աղմուկ):

Ներ. — Կը լսէ՞ք. գիւղացին հաւաքուեր է. երեսի ջուրով՝ տուներնիդ գացէք նստեցէք, և խօսք տուէք որ ասկէ ետքը բանի մը չպիտի խառնուիք:

Դրսէն. (Չայներ) — Նոր թաղական, նոր հոգաբարձուներ կ'ուզինք:

Դրի. — Բարերդի գաւառին մէջ ալ ձեզիպէսները ուզածնին կընէին. բայց անցած տարի օրէնքը գործադրուելուն պէս, դորձէ քաշուեցան. դուք ալ առանց դէմ դնելու տեղերնիդ դառնալու էք:

(Դուրսի աղմուկը կը շատնայ):

Կող. — Ոտքըդ պագնիմ նե՛րսէս, տա հէրիֆները սընկից քնցուր արէ ուր տիւնիրնիս իյնինք:

Ներ. — Դուք անհոգ եղէք, մենք հիմա անոնց կ'իմացնենք թէ տուներնիդ պիտի երթաք և այսուհետեւ բանի մը չի պիտի խառնուիք. թէ Երանոս աղբարը այսօրունէ պիտի ճամբուի և այս պատուելին վաղն առտու իր պաշտօնին գլուխը անցնի: (Ընկերոջը) Պարո՛ն Գրիգոր, գնաւ դուրսը կեցողներուն իմաց տուր ասիկայ որ հանդարտին:

(Գրիգոր կը մեկնի)

Դամ. — Պարէ սա էրքեան մինտէրինները ուր մեր տիւնէն բերինք նը. թողէք ուր տանինք:

Ներ. — Այո՛ տարէք, որպէս զի ատոնց տեղ գրասե-
զաններ գրուին :

(Աղաները կարասիները կը ծողվեն : Դուրսը աղմուկ :)

Գեն. — Ազբար, Դանիէլ յարգարէին պէս ծայն ին-
կանք. հըմայէկըս ի՞նչ տ'անենք :

Կող. — Փիլիպպոս, սա պաղչէին դէօսը օլսուն բաց ուր
սըկէց անցնինք. մէ'նչուկ, փապուճարդ տի փախչինք :

Ներ. — Շուա ըրէք, շուտ ըրէք, պաղճաին դոնէն
գացէք : (Գրիգոր կը մտնայ)

Թոր. — Փիլիպպոս, թապլաները ֆէօս չի մոռնանք,
մեր տիւնէն բերած ինք :

Կող. — Խաթըրնուս պինայէն, պարէ էրանոսին ալ
մէշղուլիյէթ մի թախսիս արէք :

Գրի. — Արթըրս անիկայ ալ թող երթայ իր տունը
նստի տէ, Հաւատով Խոստովանիմին այրերը բեները գի-
մերը համրէ, որպէսզի ի միւս անգամ գալստեան անոնց
հիսապը տայ :


(Աղաները չրպուխնին բեւերնուե սակ առած, Փիլիպս
կողմեն) :

պոստայ կարասիները շալկած, սրսմուրեամբ կը մեկնին աջ

Ներ. (Տեսնելով որ բազարուզան հոն ձգեցին, գայն
Թորոս աղային տալով) — Թագաթուզանիդ հոս մոռցաք :

«Վարագոյրը կը գոցուի»

Վ Ե Ր Զ





A $\frac{11}{29608}$

"ԱՐԵՒ" ՀՐԱՏԱՐ ԱԿՉԱԿԱՆ

«ԱՐԵՒ» Հրատարակչականը 1925ի առաջին շրջանին լոյս բնծայեց հայ հեղինակներու գործերէն հետեւեալները.

ՍԻՐԱՆՈՅՇ	Ս. Տիգրան	150	Ղրշ.
ԱՐԱՔՍԻԱ կամ ՎԱՐԺՈՒՀԻՆ	»	100	»
ԵՐԲ ԱՅԼԵՒՍ ՁԵՆ ՍԻՐԵՐ	Զ. Եսայեան	75	»
ԱՂՔԱՏԻՆ ՊԱՏԻԻԸ	Ա. Ալթունեան	150	»
ԹԱՊԱՔԵԱՐ ՓԻԼԻԿ } ԵՐԱՆՈՍ ԱՂՔԱՐ	Միասին կազմում	25	»

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ Է

Քամելիազարդ Կիւր

«ԱՐԵՒ» Հրատարակչականը ունի իր սեփական Տպարանը կը տպագրուին իր հրատարակութիւնները :

Տպագրական եւ հրատարակչական որ եւ է գործի համար դիմել Վարչութեան հասցէին՝

ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 73, «ԱՐԵՒ»

ԳԻՆ 25 ՂՐՈՒՇ
100

Տպագր. «ՇԷՄՍ»



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029608

A
1936